

## Լուս Անճելլոսի Մեջ Բազմաժամանակ Ռայեր Ներկայ Եղան Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Հետ Հանրային Հանդիպում



«Կրանտ Փարք»ի մեջ հաւաքուած բազմաժամանակ Ռայեր եկած էին լսելու Հայաստանի վարչապետին



Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ տիկինը կ'ողջունեն ժողովուրդին

Լուս Անճելլոս քաղաքն ու շրջանի հայտնի զանազան օր մը ապրեցաւ Կիրակի, Սեպտեմբեր 22, 2019ին: Արդարեւ Հայաստանի թաւաշէջ յեղափոխութեան առաջնորդ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ներկայութեամբ կը նշուէր թէ Հայաստանի անկախութեան 28րդ տարեդարձը եւ թէ թաւաշէջ յեղափոխութեան մեծ յաղթանակը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ իր տիկինը Աննա Յակոբեանի քաղաք տուած երկօրեայ աննախընթաց այցելութեան առթիւ տեղի ունեցած բազմաթիւ միջոցառումներու զագաթնակէտն էր «Կրանտ Փարք» զբօսայգիի մէջ հանդիպումը վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:

Հակառակ ոչ անտառախիտ վայրին եւ արեւալին տաք եղանակին, շուրջ 20 հազար հայտնիներ ծալի ծալի լեցուցած էին զբօսայգին:

Այս առթիւ պատրաստուած էր մեծադիր բեմահարթակ մը: Քովտոնի լայն հեռապատուներով ժողովուրդը մօտէն հետեւացաւ յայտարարին:

Ժամը 2-4 գործադրուեցաւ գեղարուեստական շատ ճոխ յայտարար մը, մասնակցութեամբ գաղութիս հանրաժանութեամբ պարախումբերուն եւ տաղանդաւոր ժողովրդային երգիչներու բարձրորակ կատարումներուն, ստեղծելով տօնական շատ բարձր տրամադրութիւն:

Ժամը 4:00ին սկսաւ պաշտօնական յայտարարը: Ալեքս Փիլիպոս վարժարանի երգչախումբի կատարմամբ ունկնդրուեցաւ Հայաստանի եւ ԱՄՆ-ի քայլերգերը, որուն յաջորդեց ներկայ հոգեւոր առաջնորդներու օրհնութեան աղօթքը:

Քաղաքապետական Խորհուրդի անդամ Փոլ Գրիգորեանի հանդիսավարութեամբ եւ բարի գալուստի սրտաբուէի ջերմ խօսքերով ընթացք առաւ յայտարարը:

Այնուհետեւ օրուան հիւրին՝

վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ հայտնի զանազան զանազատանքի ելուցներով հանդէս եկան քաղաքապետ էրիկ Կարսեթիին, Գալիֆորնիոյ փոխ-կառավարիչ էլէնի Գունազալիս, գոնկրէսական Ատամ Շիֆ, նահանգային սենատի անդամ Անթոնի Փորթալիս եւ Ատրին Նազարեան ու գաւառի վերահսկիչ Քաթրին Պարճըր: Բոլորն ալ գնահատեցին հայ ժողովուրդի բարեմասնութիւններն ու վարչապետ Փաշինեանի ժողովրդանուէր առաքելութիւնը:

Վերջապէս տեղատարափ ծափերով եւ «Նիկոլ-Նիկոլ» վանկարկումներով բեմ բարձրացաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան: Ան նախ երախտագիտութիւն յայտնեց Լուս Անճելլոսի քաղաքապետին, Ապրիլ 24ը ցեղասպանութեան օր հուշակած եւ հայ ժողովրդին գործնապէս աջակցած ըլլալուն եւ Հայաստանին նեցուկ կանգնելու համար: Ապա արտասանեց Պարոյր Սեւակի «Մենք քիչ ենք» քերթուածն, որ լիովին կը բնութագրէ հայ ժողովուրդի իսկական իրավիճակը:

Նիկոլ Փաշինեան նմանապէս շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետին, սփիւռքին Արցախին տուած հակառակ աջակցութեան, ինչպէս նաեւ Հայաստանին կատարած մարդասիրական օժանդակութեան համար: Յատուկ շնորհակալութիւն յայտնեց հայ աւանդական կուսակցութիւններուն (Հնչակեան, Ռամկարեւ Հ.Յ.Դ.), Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանչական եկեղեցիներուն, Հ.Բ.ԸՄ.ին եւ հայկական այլ կազմակերպութիւններուն, Գրքոյ Գրիգորեանին եւ Ազնաւուրին:

Նիկոլ Փաշինեանը ծաւալուն ելուցք ունեցաւ, ըսելով, որ ժամանակն է նորովի խօսիլ Սփիւռքի հետ, նորոգել Հայաստան Սփիւռք կապերը:

«Մենք յոյս ունենք, որ ինչպէս Սփիւռքը կանգնեց Հայաստան»

նում տեղի ունեցող քաղաքական յեղափոխութեան կողքին, այնպէս էլ Սփիւռքը կը կանգնի Հայաստանում տեղի ունեցող տնտեսական յեղափոխութեան կողքին», - իր ելուցին մէջ յայտարարեց Փաշինեան:

«Ես յոյս ունեմ, որ այսօրը հենց դա է նշանաւորելու, որ այն սփիւռքը, որն աջակցել է Հայաստանին հասնելու այս կէտին, երբ մենք մեր ոչ բռնի, թաւաշէջ, ժողովրդական յեղափոխութեան արդիւնքում իրաւունք ունենք համարուել աշխարհում ժողովրդավարութեան լիզերները մէկը, յոյս

ուսնեք, որ ինչպէս Սփիւռքը կանգնեց Հայաստանում տեղի ունեցող քաղաքական յեղափոխութեան կողքին, այնպէս էլ Սփիւռքը կը կանգնի Հայաստանում տեղի ունեցող տնտեսական յեղափոխութեան կողքին: Եւ ես ուզում եմ Սփիւռքի բոլոր գործարարներին հրաւիրել Հայաստան, որովհետեւ այսօրուայ Հայաստանում դուք չէք հանդիպի այն խոչընդոտներին, որոնք կային նախկինում: Հայաստանից արմատախիլ է արուած համակարգային կոռուպցիան: Հայաստանում վե-

Շար.ը էջ 5

## Վարչապետ Փաշինեան Հանդիպում Ունեցաւ ՍԳԿ Պատուիրակութեան Հետ



ՍԳԿ պատուիրակութիւնը Նիկոլ Փաշինեանի հետ

Սեպտեմբեր 22-ին վարչապետ Նիկոլ Փաշինեան Լուս Անճելլոսի մէջ հանդիպում ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան, ինչպէս նաեւ ՍԳԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի պատուիրակութեան հետ գլխաւորութեամբ Տոքթ. Համբէկ Սարաֆեանի:

Ողջունելով ՍԳԿ ղեկավար կազմի ներկայացուցիչները՝ վարչապետ Փաշինեանը ըսաւ, Յարգելի պարոն Սարաֆեան, յարգելի գործընկերներ, ուրախ եմ ձեզ հետ այսօր այստեղ հանդիպելու ու նաեւ մեր ընթացիկ օրակարգի հարցերը քննարկելու համար: Ի հարկէ,

Շար.ը էջ 5

# ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Հայերը Վերադառնում են

### ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Լոս Անձելեսում տեղի ունեցած հանրահավաքի ընթացքում ունեցած ելույթում վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, որ ապրել Հայաստանում՝ սփիւռքահայի համար չի նշանակում անպայմանորէն ապրել Հայաստանի տարածքում, որովհետեւ ապրել Հայաստանում հնարաւոր է Հայաստանով ապրելու միջոցով:

Աշխարհասփիւռ հայութեան համար դա կարեւոր հանգամանք է, նկատի ունենալով այն, որ հայկական պետականութեան ուժը նաեւ այդ սփռուածութիւնն է, որը տասնամեակների ընթացքում վերածուել է համաշխարհային տարածում ունեցող տարբեր կառույցների, կամ ինչպէս ասում են՝ ցանցի, եւ այն ամբողջապէս հաւաքել ու տուն բերելը ամենեւին լաւագոյն հեռանկարը չէ, որ կարող է լինել համահայկական օրակարգում:

Հայկական պետականութեան խնդիրը պէտք է լինի համաշխարհային համահայկական տարածուածութեամբ աշխարհը հայկական բովանդակութեամբ հարստացնելը, համաշխարհային կեանքում առկայ խնդիրների լուծմանը լիարժէք մասնակցութեամբ ներգրաւուելը, ինչի համար արդէն իսկ մեկնարկային կէտ է համաշխարհային սփռուածութիւնը: Դա է բնորոշ մեծ ազգերին: Իսկ հայութիւնը, ինչպէս նկատեց վարչապետ Փաշինեանը, պէտք է յաղթահարի փոքրութեան բարդոյթը:

Ի դէպ, միանգամայն իրաւացի այդ խնդրի արձանագրումը ստուերեց հանրահավաքի համար թերեւս ոչ այնքան յաջող ընտրուած սեւակեան բանաստեղծութիւնը՝ «Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում»: Հանգաւորման եւ «ներհայկական բրենդաւորման» տեսանկիւնից լաւ մշակուած ստեղծագործութիւնն այդուհանդերձ ինքնին փոքրութեան բարդոյթի դրսեւորում է:

Բարդոյթը յաղթահարած սերնդին այդ բանաստեղծութիւնն

աստիճանաբար երեւի թէ պէտք է դառնայ ականջին խորթ, անբարեհունչ, անգամ անվայելուչ՝ փոքրութեան բարդոյթը յաղթահարած ազգի համար:

Իհարկէ, գործնականում հնարաւոր էլ չէ, որ բոլոր հայերը գան եւ ապրեն Հայաստանում: Ըստ այդմ հայրենադարձութեան գաղափարը չի սպառնում «ցանցը» հաւաքելու եւ տուն բերելու վտանգով: Միաժամանակ, սակայն, անհրաժեշտ է հասկանալ, թէ ինչով է զբաղուում ցանցը, այսպէս ասած ինչով են «Հայաստանով ապրում»՝ Հայաստանից դուրս:

Յոյժ կարեւոր է նաեւ սահմանել այն օրակարգը, առաջնահերթութիւններն ու մեխանիզմները, արժեհամակարգային ուղեւորչները, որոնց շուրջ պէտք է կազմակերպուի հայութեան՝ Հայաստանից դուրս, բայց «Հայաստանով ապրելը»:

Ներկայում այն առաւելապէս զգայական կենսաձեւ է՝ Հայաստանով ապրելը, մտահոգուելը, ցաւելը, ուրախանալը, երջանկանալը, տարուայ մէջ գոնէ մէկ անգամ Հայաստան գալու պահը տենչալը: Դրանք կարեւոր են:

Բայց շատ կարեւոր է, որպէսզի համահայկական օրակարգում ձեւաւորուի այն, թէ ինչպէս է սփիւռքահայը, ապրելով իր երկրում, դրան ինտեգրում «Հայաստանով ապրելը», երբ ոչ միայն ինքն է ինչ որ բան տալիս կամ անում Հայաստանի համար, այլ նաեւ ստանում Հայաստանից՝ իր համար, եւ ոչ լոկ բարոյական նշանակութեան ինչ որ բան:

Դրա շնորհիւ է աշխատելու համահայկական այն օրակարգը, որի մասին խօսակցութիւնը վարչապետ Փաշինեանը սկսեց Օգոստոսի 5-ին Ստեփանակերտում, որը գործնականում համաշխարհային կեանք հայկական պետականութեան վերադարձի մասին խօսակցութեան սկիզբն էր, եւ որը պէտք է շարունակուի եւ ինտենսիւ բնոյթ ստանայ Հայաստանում եւ Սփիւռքում:

«ԼՐԱԳԻՐ»

## Ինքնակոչ Հրեշտակապետը Վատիկանից

Սերժ Սարգսեանի փեսայ Միքայել Մինասեանը կամաց-կամաց դուրս է գալիս ստուերից, որի քողի տակ էր թաքնուում մինչ վերջերս:

Նախկինում իր իսկ քարոզչամեքենայի կողմից որպէս «մոխրագոյն կարդինալ» ներկայացուող անձը, որ գրեթէ երբեք չէր խօսում, բայց շատ գործեր եւ իրադարձութիւններ վերագրուում էին նրա անտեսանելի ձեռքին, այսօր ֆէյսբուքեան բաց տիրոյթում քաղաքականութիւն մտնելու ակնյայտ փորձեր է անում:

Շատերի պնդմամբ՝ Մինասեանի կերպարը նախկինում, երբ «առասպելական էր», շատ աւելի հետաքրքիր էր, քան հիմա, երբ նա հանրութեան առաջ հանդէս է գալիս իր տեսքով ու խօսքով:

Բայց ինչեւէ: Դառնանք Մինասեանի՝ յատկապէս վերջին օրերի ակտիւութեանը:

Արդէն քանի անգամ Մինասեանը «անյայտ պացիենտին» ուղղուած գրառումներ էր կատարում ֆէյսպուքում, իսկ այսօր էլ հանդէս եկաւ մի շեղեւորալ գրառմամբ, որտեղ արդէն բաց տեսքով ցոյց տուեց, որ թիրախում Նիկոլ Փաշինեանն է:

Երկար-բարակ գեղարուեստական գեղումներով տեքստում Մինասեանը Փաշինեանին «հռչակում է»՝ «ասելութեան առաքեալ՝ ուռուցք» ու յայտարարում, թէ «ուռուցքը պէտք է հեռացուի»:

Բայց այս գրառման ամենաուշագրաւ հատուածը բուն տեքստը չէ, այլ այն, թէ ինչ նկարով է Մինասեանը համեմել ասելիքը:

Իսկ ասելիքը Մինասեանը համեմել է աշխարհահռչակ նկարիչ Ռաֆայել Սանտիի «Միքայել հրեշտակապետ սպանում է վիշապին/դեւին» նկարով:

Եթէ ասելիքի հետ այլ նկար լինէր՝ դեռ ոչինչ, բայց այս նկարը, մեղմ ասած, աւելի քան խօսուել է եւ շատ բաներ է պատմում իրականում հենց իր՝ Մինասեանի հոգեվիճակի մասին:

Քարոզչական առումով փորձելով Փաշինեանի շուրջ ստեղծել տեղեկատուական շղարշը՝ «պացիենտ լինելու» մասին, Մինասեանը, ինքն էլ չհասկանալով թերեւս՝ իր

շուրջ է ստեղծում այդ շղարշը: Եթէ համեմատում ենք նկարն ու տեքստը, ապա ակնյայտորէն երեւում է, որ Սերժ Սարգսեանի փեսայ Միքայել Մինասեանը, փաստորէն, իրեն նոյնացնում է Միքայել հրեշտակապետի հետ:

Մինասեանի գիտակցութիւնը գուցէեւ ուժեղ է, բայց ենթագիտակցութիւնն այս պարագայում աւելի ուժեղ է, նա, իրենից անկախ, յայտարարում է, թէ իր կարծիքով՝ ինքը Միքայել հրեշտակապետն է, «Նա, ով նման է Աստծուն»:

Մասնագէտներն, իհարկէ, աւելի լաւ հոգեվերլուծութիւն կարող են անել պարոն Մինասեանի հոգեվիճակի մասին, մենք պարզապէս չիշեցնենք, որ նրա արածը, այսինքն՝ սեփական անձը հրեշտակապետի հետ նոյնականացնելը, հպարտութեան նշան է, իսկ հպարտութիւնն, ինչպէս գիտենք, 7 մահացու մեղքերից առաջինն է:

Բացի այդ, աշխարհին այլ Միքայելներ էլ են յայտնի, եւ այնպէս չստացուի, որ ցանկանաս լինել «հրեշտակապետ», բայց դառնաս Բուլգակովի յայտնի աթերիստ հերոսը՝ Միխայիլ Ալեքսանդրովիչ Բեռլիոզը՝ օրինակ:

Իսկ մեծ հաշուով, գեղարուեստական գեղումներով այս քարոզչական աղմուկն իրականում այլ պատճառներ ունի եւ որեւէ աղերս չունի նախկինների՝ հայրենիքի, կրօնի, եկեղեցու, հայի, Հայաստանի, Արցախի հանդէպ սիրոյ հետ: Նրանց մի մասն՝ արդէն, իսկ միւս մասը՝ պոտենցիալ մեղադրեալներ են կոռուպցիոն գործերով, եւ նրանք ընդամենը շահարկում են այս թեմաները՝ մեղադրանքից խույս տալու կամ թեման շեղելու յոյսով:

«ԻԼՈՒՐ»

## Արթուր Վանեցեանը Սպառնում է «Գաղտնախօսու՞մով»

### ԱՐԱՍ ԱՍԱՏՈՒՆԻ

ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցեանը hrparak.am-ի միջոցով պատասխանել է վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ Լոս Անձելեսում ասուլիսի ընթացքում իր հասցէին հնչեցրած կոշտ քննադատութեանը: Վանեցեանի պատասխանը եղել է ոչ պակաս կոշտ եւ ընդ որում՝ սպառնալից: Նա յայտարարել է, որ Նիկոլ Փաշինեանը խօսում է բաներից, որոնցից չի հասկանում, չգիտի՝ ինչ է սպալի պատիւը, եւ զգուշացրել է, որ իր հասցէին խօսակցութիւնը շարունակուելու դէպքում ինքն էլ չի լռի:

Արթուր Վանեցեանը փաստօրէն սպառնում է իշխանութեանը: Թէ ինչի մասին է նա սպառնում չլռել՝ մնում է միայն ենթադրել, լաւ պատկերացնելով, թէ ինչ կարգի ինֆորմացիայի կարող է տիրապետել ԱԱԾ նախկին ղեկավարը: Բայց այդքանն էլ բաւարար է՝ պատկերացնելու համար, թէ ինչ հետեւանքներ կարող է ունենալ այդ ամէնը Հայաստանի հասարա-

կական-քաղաքական կեանքի, միջազգային վարկի, Հայաստանի հեղինակութեան եւ կարողունակութեան վրայ: Այդպիսով՝ ԱԱԾ պետի եւ վարչապետի հեռախօսագրոյցի գաղտնալուծումը այդ ամէնի մօտ կարող է թուալ ընդամենը մանկական խաղ:

Միւս կողմից՝ հետաքրքիր է, չլռելով սպառնացող ԱԱԾ նախկին պետը կարո՞ղ է արդեօք ասելիք ունենալ գաղտնալուծման, դրա քննութեան վերաբերեալ: Որովհետեւ հանրութիւնը նրանից ասելիք սպասում է հենց դրա վերաբերեալ՝ հասկանալու համար, թէ ինչպէս է ստացուել, որ գաղտնալուծել է երկրի առաջին դէմքը, երբ նրա հետ խօսում է երկրի դէ ֆակտո թերեւս երկրորդ դէմքը: Մինչդեռ այդ ամէնի վերաբերեալ Արթուր Վանեցեանը լռել եւ լռում է՝ մի անգամ ասելով, թէ յայտնի է գաղտնալուծման պատուիրատուն, որը հանրութեանը յայտնի դէմք է, սակայն անուն չեն կարող հրապարակել ապացոյցների անբաւարարութեան պատճառով: Մինչդեռ

այժմ Արթուր Վանեցեանը վարչապետ Փաշինեանին իր պատասխանով, դատելով դրա բովանդակութիւնից եւ տոնայնութիւնից, սպառնում է դէ ֆակտո նոյն «գաղտնալուծմամբ», երբ յայտարարում է, որ կը խօսի, եթէ իր հանդէպ չլռեն: Երբ ԱԱԾ նախկին պետը յայտարարում է, թէ կը խօսի՝ զգուշացնող կամ սպառնալից տոնով, դա գործնականում հաւասարազօր է ԱԱԾ պետին գաղտնալուծում: Պարզապէս մի դէպքում նրան լուծ են գաղտնի, մէկ այլ դէպքում նա ինքն է խօսում հրապարակաւ, եթէ ասում է բաներ, որոնք չպէտք է ասուէին:

Այլ կերպ ասած՝ ԱԱԾ «գաղտնալուծած» նախկին ղեկավարը ներկայումս յայտարարում է, թէ կարող է «գաղտնախօսել», եթէ վարչապետն իրեն հանդիստ չիթողնի: Վանեցեանի ներկայիս պատասխանը արդէն ուղղակի ձեռնոց էր վարչապետին: Ինչպիսին է լինելու դրա պատասխանը: Աներկբայ է մի բան, որ ծաւալուող զարգացումը չունի պետական բնոյթ, եւ այն պէտք է կասեցնել առաւելագոյն արագ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՄ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ  
 ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՐԵ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, \$100.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$250.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

# ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Հայաստանի Անկախութեան Տօնի Գլխավոր Միջոցառումները Գիւմրի Մէջ



Գիւմրիի մէջ տեղի ունեցած «Մեր Ժամանակի հերոսը» մրցանակաբաշխութիւնը

Անկախութեան տօնի գլխավոր միջոցառումները այս տարի առաջին անգամ տեղի ունեցան մայրաքաղաքէն դուրս՝ Գիւմրիի մէջ:

Մինչ Գիւմրիի մեկնելը Հայաստանի բարձրագոյն ղեկավարութիւնը, Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Լեւոնայի Ղարաբաղի նախագահը այցելած են «Եռաբլուր» գինուորական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու իրենց կեանքը Հայրենիքի անկախութեան համար զոհաբերածներու յիշատակին:

Իսկ մինչ այդ Գիւմրիի մէջ սկսած էին տօնական միջոցառումները, որոնց համար այս տարի կառավարութիւնը 220 միլիոն դրամ յատկացուցած էր:

Գլխավոր միջոցառումը «Սեւ բերդ» ամրոցին մէջ էր: Հայաստանի եւ Արցախի նախագահներու, վարչապետի ու Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի մասնակցութեամբ առաջին անգամ մրցանակներ յանձնուեցան գործարարներու, որոնց բացառապէս էին Հայաստանի տարբեր գիւղերու ու քաղաքներու մէջ: 45 թեկնածուներէն 13-ը ստացան «Մեր Ժամանակի հերոսը» անուանումով մրցանակը:

## Խորհրդարանը Հաւանութիւն Տուաւ Հարկային Օրէնսգիրքի Փոփոխութիւններուն

Խորհրդարանականները 92 կողմ ձայներով երկրորդ ընթերցմամբ ու ամբողջութեամբ ընդունեցին Հարկային օրէնսգիրքի փոփոխութիւնները:

Կը նախատեսուի աւելացուած արժէքի ժամկետանց պարտք՝ մօտ 56 միլիարդ դրամ վերադարձնել 2835 տնտեսվարողներու:

Օրինագիծը ներկայացնելու ժամանակ Պետեկամուտներու կոմիտէի նախագահի տեղակալ Արթուր Մանուկեանը ըսած է. - «Միւս կարեւոր քայլը, որ կատարուած է այստեղ էր որ 20 միլիոն սահմանաչափը, որ այսօր սահմանուած է այդ գումարների վերադարձման համար, այսինքն՝ պարզեցուած ընթացակարգով, առանց ստուգումների եւ ուսումնասիրութիւնների, այդ սահմանաչափը կրկնակի անգամ բարձրացուած եւ սահմանուած է 40 միլիոնի չափով»:

Պիւտեմէն գումար ստացող տնտեսվարողներու շարքին 183-ը խոշորներ են: Որոշք են անոնք տնտեսվարողներու ցանկը հրապարակելու յորդոր պետական եկամուտներու կոմիտէին յղած է Մանուկեանը («Լուսավոր Հայաստան»):

Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը ընդգծած է՝ իր համար «մեր ժամանակի հերոսներէն է նաեւ Գիւմրին, որ 30 տարի համբերատար սպասել է այս օրուան»: «Հասկանալով, որ մեր ժողովուրդը պայքարի է դուրս եկել, եւ իր ժամանակը չէ, արժանապատուութեամբ կրել է իր դժուարութիւնը: Ժամանակը եկել է, եւ ես կարծում եմ, պարոն վարչապետ, այսօր առաջին օրն է Գիւմրու եւ գիւմրեցու ապագայ, նոր, ազատ եւ ստեղծագործ կեանքի», - յայտարարած է Սարգսեանը:

Գլխավոր մրցանակը յանձնած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Մինչ այդ խօսած է օրուայ խորհուրդի մասին՝ շեշտելով, որ օրուայ հերոսները սահմանին կանգնած գինուորներն են: Իսկ գինուորը սահմանին ուժեղ կը լինի, երբ թիկունքն է ամուր: Ան նաեւ աւելցուցած է, որ ինչպէս յեղափոխութիւնը, այնպէս ալ տնտեսական յեղափոխութիւնը կախուած է մէկ մարդէ:

Ամբողջ օրը Գիւմրիի հրապարակներուն վրայ տեղի ունեցած են տարբեր միջոցառումներ ու համերգներ:

տան»): - «Այդ գումարներից զգալի գումար՝ մօտ 1,5 միլիարդ, վերադարձուելու է Սերժ Սարգսեանի եղբոր ընտանիքին պատկանող կազմակերպութիւններից մէկին, որը այս պահին լուծարման մէջ չէ, սնանկութեան մէջ չէ: Եւ ըստ էութեան, մենք ունենք հետախուզման մէջ գտնուող ընտանիքի անդամներ, ում կազմակերպութեան վերադարձնելու ենք այս գումարները»:

Թանգիլեանը առաջարկած է դադարեցնել քննարկումը ու քուէարկութիւնը եւ փակ ռեժիմով բացառապէս խոշորներու ցանկը:

Քուէարկութեան առաջ «Լուսավոր Հայաստան» խմբակցութիւնը ընդմիջում խնդրեց, որմէ ետք ողջ կազմով կողմ քուէարկեց նախագիծին:

Կառավարութեան հիմնաւորմամբ, Հարկային օրէնսգիրքի փոփոխութիւնները պայմանաւորուած են անով, որ այսօր պիւտեմէն ունի բաւարար նիւթական միջոցներ: Հարկ վճարողներուն գումաները վերադարձնելով՝ կ'ակնկալեն, որ անոնք այդ փողերը կ'ուղղեն դէպի տնտեսութիւն:

## Յայտնաբերուած Է Նախկին Ոստիկանապետ Հայկ Յարութիւնեանի Դին

Յայտնաբերուած է 2003-2008 թուականներուն Հայաստանի ոստիկանութեան պետի պաշտօնը զբաղեցուցած Հայկ Յարութիւնեանի դին՝ գլխուշրջանին հրազէնային վնասուածքով: Այս մասին «Ազատութեան» յայտնած են Ոստիկանութեան:



Նախկին ոստիկանութեան պետ Հայկ Յարութիւնեան

Ոստիկանութեան նախնական վարկածով՝ տեղի ունեցածը ինքնասպանութիւն է: Քննչական կոմիտէի կողմէ մարզային քննչական վարչութեան ներսքննութիւն կը կատարուի՝ մահուան դէպքի հանգամանքները պարզելու ուղղութեամբ:

«Նախնական տուեալներով՝ 2019 թուականի Սեպտեմբեր 23-ին՝ ժամը 23: 59-ին ահազանգ է ստացուել, որ ԲՂնիի առանձնատներից մէկում դի կայ: Դէպքի վայր է մեկնել քննչական խումբ, որտեղ գլխի շրջանում հրազէնային վիրաւորումով յայտնաբերուել է Հայկ Յարութիւնեանի դին», - Ֆէյսպուքի էջին գրած է Քննչական կոմիտէի խօսնակ Նայիրա Յարութիւնեանը:

Դէպքի առթիւ յարուցուած է քրէական գործ՝ քրէական օրէնսգիրքի 110-րդ յօդուածի 1-ին մասի (սպառնալիքի, դատան վերաբերմունքի կամ անձնական արժանապատուութիւնը պարբերաբար նուաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտաւորութեամբ կամ անզգուշութեամբ ինքնասպանութեան կամ ինքնասպանութեան փորձի հասցնելը) յատկանիշներով:

«Կատարուել է դէպքի վայրի գննութիւն, որտեղ յայտնաբերուել է արնաման հետքեր: Յայտնաբերուել է հրազէն եւ պարկու՛ճ», -

փոխանցած է Քննչական կոմիտէի խօսնակը՝ խոստանալով լրացուցիչ տեղեկատվութիւն տրամադրել:

Յարութիւնեանը Մարտ 1-ի գործով վկայի կարգավիճակ ունէր: Քննչական կոմիտէի խօսնակը աւելի ուշ նոր գրառում կատարած է: «Յայտնում ենք, որ Հայկ Յարութիւնեանի մահուան դէպքի հանգամանքները պարզելու նպատակով հարցաքննուել է դէպքի վայրում նրա հետ գտնուող անձը: Վերջինս յայտնել է Հայկ Յարութիւնեանի հետ ունեցած խօսակցութեան բովանդակութիւնը, որը առնչութիւն չի ունեցել Մարտի 1-ի դէպքերի առթիւ քննուող քրէական գործի շրջանակներում նրա վրայ ճնշումներ գործադրելուն եւ առհասարակ որեւէ անձի կողմից ճնշումներ գործադրելուն», - նշած է Յարութիւնեանը՝ լրատուամիջոցներուն յորդորելով գերծ մնալ չճշդուած տեղեկութիւններ հրապարակել:

## Սեղադրանք Առաջադրուած Է Նախկին Ոստիկանապետ Վլատիմիր Գասպարեանին

Հայաստանի նախկին ոստիկանապետ Վլատիմիր Գասպարեանին Քննչական կոմիտէն մեղադրանք առաջադրած է իշխանութիւնը չարաչահելու համար: Խափանման միջոց ընտրուած է չհեռանալու մասին ստորագրութիւնը:

Գասպարեանի փաստաբան Տիգրան Աթանէսեանը Ֆէյսպուքի իր էջին վրայ յայտարարած է, որ Գասպարեանը իրեն մեղաւոր չի ճանչնար եւ կը հրաժարի քննութեան այս փուլին ցուցմունքներ տալ:

Քննչական կոմիտէի խօսնակ Նայիրա Յարութիւնեանը «Ազատութեան» փոխանցած է, որ թէեւ Գասպարեանը կը հրաժարի ցուցմունք տալ, սակայն խոստացած է Քննչական կոմիտէի հաշիւին վճարել պետութեան պատճառած առանձնապէս խոշոր չափերով՝ մօտ 22 միլիոն դրամի վնասը:

## Երեւանի Մէջ Տեղի Ունեցած Է Հանրահաւաք Ի Պաշտպանութիւն Ամուլսարի

Երեւանի մէջ մեկնարկուած է հանրահաւաք Ամուլսարի ոսկիի հանքի շահագործման դէմ:

Հանրահաւաքը ընթացած է «Ֆրանսայի» հրապարակի մէջ, որմէ յետոյ տեղի ունեցած է քայլերթ: Հանրահաւաքին մասնակցած են բնապահպանական եւ քաղաքական տարբեր կազմակերպութիւններու եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ:

Յիշեցնենք, որ Ամուլսարի պաշտպանները երկրի կառավարութեան վերջնաժամկէտ տուած էին մինչեւ 20 Սեպտեմբեր, այդ օրը հռչակելով որպէս բնապահպանական մոբիլիզացիայի օր: Կառավարութիւնը կը համարէ, որ հիմքեր չկան արգիլելու «Լիտիան» ընկերութեան կողմէ հանքի շահագործումը:

## Փաշինեան. ԱԱԾ-ն Պիտի Հալածէ Բոլոր Կաշառակերներուն

Նոր Հայաստանի մէջ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) անձ չէ, համակարգ է եւ պիտի գայ «բոլոր քոռուփցիոններին, լրտեսներին եւ այս կարգի այլ տարրերի ետեւից», Ֆէյսպուքի իր էջին գրած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Որոշ քոռուփցիոններն մտածել են, թէ ԱԱԾ-ում խառն են եւ իրենք կարող են այս ընթացքում իրենց մութ գործերը կարգաւորել: Նոր Հայաստանում ԱԱԾ-ն անձ չէ, ԱԱԾ-ն համակարգ է եւ նա գալու է ներկայ ու նախկին բոլոր քոռուփցիոններին, լրտեսներին եւ այս կարգի այլ տարրերի ետեւից: Ինչպէս նաեւ Քննչական կոմիտէին, Յատուկ քննչական ծառայութիւնը, դատախազութիւնը, ոստիկանութիւնը եւ Պետական եկամուտներու կոմիտէի քննչական վարչութիւնը», - ըսուած է վարչապետի գրառման մէջ:

# ԼՈՒՐԵՐ

## ԱՄՆ Գոնկրէսականները Հայաստանէն Ետք Որոշած են Այցելել Նաեւ Ղարաբաղ



Ամերիկացի Գոնկրէսականներ, որոնք պիտի այցելեն Հայաստան եւ Արցախ

ԱՄՆ-ի Գոնկրէսականներ ձեռքի Սփիր-Կանչելեան, ձուտի Չու եւ Ֆրանք Փալոնի Հոկտեմբեր 1-ին, Հայաստան մէկ շաբթուայ այցի ծիրէն ներս՝ որոշած են նաեւ Լեռնային Ղարաբաղ այցելել: «Ամերիկայի ձայն»-ի տուեալներով՝ ԱՄՆ-ի Գոնկրէսականներս կայացած Ամերիկայի հայկական համագումարին ծիրէն ներս՝ յայտարարած է փաստիւնան ներկայացնող ձուտի Չուն:

«Ես առանձնակի հետաքրքրութեամբ կը նախատեսեմ Արցախ այցելել, որպէսզի համոզուիմ, թէ այնտեղ իրավիճակը ինչպէս է», - ըսած է ան:

Գոնկրէսական Չուի նախաձեռնութիւնը, որ շուրջ մէկ ամիս առաջ ընդունուած էր ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու պալատի մեծամասնութեամբ, կը նախատեսէ դարաբաղեան զինադադարը ամրապնդող Ռոյս-Էնկելի առաջարկի իրականացման համար 4 միլիոն տոլար յատկացնել: Այդ գումարով Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի սահմանագիծին երկայնքով պիտի տեղադրուին յատուկ սարքեր, որոնք թոյլ պիտի տան պարզելու, թէ որ կողմը խախտուած է զինադադարը:

Չուտի Չու նաեւ պիտի փորձէ յաւելել 6 միլիոն ուղղակի ամերիկեան օգնութիւն ապահովել Ղարաբաղին: Քոնկրէսականին խօսքով, ան տպաւորուած էր անցնող զարնան Գոնկրէսի մէջ կայացած Հայաստանի առաջին տիկին Աննա Յակոբեանի հետ հանդիպումէն:

«Արցախ այցելել յատկապէս շատ կ'ուզեմ, որպէսզի իրավիճակին ծանօթանամ, տեսնեմ, թէ այնտեղ ինչ կը կատարուի եւ ապագային կարենամ ալ աւելի լուրջ աջակցութիւն ցուցաբերել Արցախի մէջ խաղաղութեան հաստատման», - ընդգծած է ան:

Գոնկրէսի մէջ հայ-ամերիկեան բարեկամութեան խումբի հիմնադիր եւ համանախագահ քոնկրէսական Ֆրանք Փալոնի կարծիքով՝ իրենց այցը յատկապէս կարեւոր է, քանի որ ամերիկեան օրէնսդիրներու առաջին այցն է Հայաստան թաւաշէյ լեղափոխութենէն ետք:

«Մեր այցին պատճառներէն մէկը այն է, որ մեր խումբը կ'ուզէ աջակցութիւն ցուցաբերել Հայաստանի նոր կառավարութեան ու խորհրդարանին», - ըսած է Փալոնի:

Անոր խօսքով, հակառակ անոր, որ Պետքարտուղարութիւնը ամերիկացի օրէնսդիրներուն խորհուրդ տուած է խուսափելու Ղարաբաղ այցելութենէն, պատուիրակութիւնը որոշած է այնուամենայնիւ կատարել նաեւ այդ այցելութիւնը: Հայաստան այցելութեան ծիրէն ներս՝ Գոնկրէսականները կը նախատեսեն հայաստանցի գործընկերներու հետ քննարկել քաղաքական եւ առեւտրատնտեսական ոլորտներու մէջ համագործակցութեան ընդլայնումը:

«Մենք շատ խանդավառուած ենք թաւաշէյ լեղափոխութեան արդիւնքով: Հայաստանը աւելի ժողովրդավար երկիր դառնալու ճանապարհին է: Մեզի կ'ոգեշնչէ նոր կառավարութեան՝ փտածութեան դէմ պայքարի, դատաիրաւական բարեփոխումներու իրականացման եւ երկրին մէջ օրէնքի գերակայութեան հաստատման ուղղուած քաղաքական կամքը», - նշած է ան:

«Մենք շատ խանդավառուած ենք թաւաշէյ լեղափոխութեան արդիւնքով: Հայաստանը աւելի ժողովրդավար երկիր դառնալու ճանապարհին է: Մեզի կ'ոգեշնչէ նոր կառավարութեան՝ փտածութեան դէմ պայքարի, դատաիրաւական բարեփոխումներու իրականացման եւ երկրին մէջ օրէնքի գերակայութեան հաստատման ուղղուած քաղաքական կամքը», - նշած է ան:

## Հայաստանի Եւ Արցախի Մէջ Մեկնարկած Են Լայնածաւալ Զօրավարժութիւններ

ՀՀ Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը յայտարարած է, որ «Զինուած ուժերու ծաւալումը, հակառակորդին յարձակման դիմադրաւորումը» թեմայով մեկնարկած լայնածաւալ ուղղմամբարական զօրավարժութիւններուն հազարաւոր քաղաքացիներ ներգրաւուած են:

Նախարարը ընդգծած է, որ նման ծաւալներով զօրահաւաքային վարժանքներ Հայաստանի մէջ առաջին անգամ տեղի կունենան:

Տօնոյեանը խօսած է երկու օր առաջ Ղարաբաղի մէջ ատրպէյճանցիներու ներթափանցման փորձի մասին: Հարցին, թէ ինչով կը պայմանաւորէ ատրպէյճանական կողմի աշխոյժութիւնը, նախարարը արձագանգած է՝ չի կրնար ըսել:

Զօրավարժութիւնները պիտի տեւեն մինչեւ Հոկտեմբեր 5-ը: Արդէն պայմանական ուղղմամբարական զօրավարժութիւնը կ'աւարտուի: Անոնց ընթացքին Զինուած ուժերու տարբեր ստորաբաժանումները պիտի իրականացնեն մարտական կրակի կիրառմամբ պայմանական նշանակէտերու խոցումներ:

Հայաստանի մէջ կայացող զօրավարժութեան զուգահեռ նաեւ Արցախի մէջ տեղի կ'ունենան համանուն զօրավարժութիւն: Արցախի Պաշտպանութեան բանակէն կը յայտնեն, որ զօրախաղերու այս փուլին պաշտպանութեան բանակի զօրամասերը տաճնապով բերուած են մարտական պատրաստականութեան աստիճանի:

## Նիւ Եորքի Մէջ Կայացած Է Հայաստանի Եւ Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարներու Հանդիպումը



Հայաստանի եւ Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարներու եւ ԵԱՀԿ Մինսքի խումբի համամախագահներու հանդիպումը Նիւ Եորքի մէջ

Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած է Հայաստանի եւ Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարներու՝ Զոհրապ Մնացականեանի եւ էլմար Մամետարովի հանդիպումը՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներ Իկոր Փոփովի, Ստեֆան Վիսթրոմի, Էնտրիկ Շոֆերի եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Քասիչի մասնակցութեամբ:

Քննարկման ընթացքին հայկական կողմը կարեւոր համարած է զինադադարի ամրապնդման եւ լարուածութեան նպաստակով նախապէս ձեռք բերուած համաձայնութիւններու կեանքի կոչման միջոցով:

Ատրպէյճանի տարածքին կալանքի մէջ գտնուող ՀՀ քաղաքացիներուն առնչութեամբ՝ հայկական կողմը շեշտած է վերջիններու հայրենադարձութեան ապահովման անհրաժեշտութիւնը:

Կողմերը նախանշած են այս ուղղութեամբ չեղարկուող քայլերը, ինչպէս նաեւ համանախագահներու այցը տարածաշրջան եւ մօտ ժամանակներս ԱԳ նախարարներու մակարդակով հերթական հանդիպման իրականացումը:

## Նիւ Եորքի Մէջ Հայաստանի Եւ Քալիֆորնիոյ Միջեւ Ստորագրուեցաւ Համաձայնագիր Համագործակցութեան Վերաբերեալ



ՀՀ արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեան եւ Քալիֆորնիոյ նահանգապետ Կելըն Նիւրմ կը ստորագրեն համաձայնագիրը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ժամանեց Նիւ Եորք՝ ՄԱԿ-ի 74-րդ նստաշրջանի աշխատանքներուն մասնակցելու նպատակով:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայութեամբ Նիւ Եորքի Հայաստանի Հանրապետութեան եւ Քալիֆորնիոյ նահանգի միջեւ ստորագրուեցաւ Շրջանակային համաձայնագիր համագործակցութեան վերաբերեալ: Համաձայնագիրը ստորագրեցին ՀՀ արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեան եւ Քալիֆորնիոյ նահանգապետ Կելըն Նիւրմ: Համաձայնագրով Հայաստանը եւ Քալիֆորնիոյ կը զարգացնեն համապարփակ համագործակցութիւն՝ բոլոր ուղղութիւններով:

Համաձայնագրի ստորագրումէն ետք տեղի ունեցաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Քալիֆորնիոյ նահանգապետի հանդիպումը: Զրուցակիցները համակարծիք եղած են, որ Շրջանակային

համաձայնագրի ստորագրումը կը նպաստէ փոխգործակցութեան խորացման եւ Հայաստան-Քալիֆորնիա կապերու զարգացմանը:

Վարչապետը նշած է, որ Քալիֆորնիան Ամերիկայի հայութեան կեդրոններէն է, ինչպէս նաեւ ԱՄՆ ամենանորարարական տնտեսութեան ու տեխնոլոգիական ձեռքբերումներ ունեցող նահանգը, եւ Հայաստան հետաքրքրուած է աւելի ամրապնդելու կապերը ԱՄՆ ամենահայաշատ նահանգներէն մէկուն հետ:

Քալիֆորնիոյ նահանգապետը ողջունած է Հայաստանի վարչապետի այցը ԱՄՆ՝ նշելով, որ Քալիֆորնիայի հայութեանը մեծ դերակատարութեան ունի նահանգի զարգացման եւ հայ-ամերիկեան կապերու ամրապնդման գծով: Ան յայտնած է որ, Քալիֆորնիան եւս կարեւոր կը նկատէ Հայաստանի հետ փոխգործակցութեան զարգացումը եւ համատեղ ծրագրերու իրականացումը:

# Լոս Անճելոսի Մեջ Բազմաազգային Ռազմա-Ներկայ Եղան

Շարունակուած էջ 1-էն

րացուած է մենաշնորհների եւ օլիգարխիայի իշխանութիւնը: Հայաստանում յաղթահարուած է ստուերային տնտեսութիւնը: Միջազգային բոլոր կազմակերպութիւնները Հայաստանի վերաբերեալ հանդէս են գալիս աւելի ու աւելի լաւատեսական տնտեսագիտական գնահատականներով՝ աւելի ու աւելի մեծացնելով տնտեսական աճի կանխատեսումները Հայաստանի վերաբերեալ:

«Եւ ես ուզում եմ, այո, շատ յստակ արձանագրել, որ Հայաստանի տնտեսութեան զարգացման այ-

լին, մարզական եւ բարեսիրական տարբեր կազմակերպութեանց ղեկավարներ:


Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Արմէն Բալբուրդեանի ողջոյնի եւ բարի գալուստի ջերմ խօսքերէն ետք ելոյթ ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան: Ան ամփոփ գիծերու մէջ ներկայացուց թաւշեայ յեղափոխութենէն ետք կատարուած իրագործումներն ու պետութեան առջեւ դրուած առաջադրանքները, մօտաւոր ապագային երկրի ընդհանուր յառաջընթացի ծրագիրներու մասին:

Շահեկան հարցադրումներով

Նիկոլ Փաշինեանի «Սիրելի գործընկերներ» ողջոյնի խօսքով եւ առանց մասնաւոր ներածութեան վարեց մտերմիկ հարցադրոյցը իր եւ ներկաներուն միջեւ: Արծարծուած գլխաւոր հարցադրումներն էին Ամուլսարի հանքարդիւնաբերութիւնը, փտախտի վերացումը, պետութիւն-եկեղեցի փոխ-յարա-

այլ անձնաւորութիւններ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանին ուղղուած ողջոյնի սրտալուրջ խօսքերով բարի գալուստ մաղթեց Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիք Կարսեթին: Իր պատասխան խօսքին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհակալութիւն յայտնեց Երեւանի հետ քոյր քաղաք նկա-



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA www.gov.am

սորուայ տեմպերը մեզ թոյլ են տալիս ասել, որ մենք միասին տնտեսական թուիչք չարուցելու հնարաւորութիւն ունենք եւ այս վճռական պահին ես յոյս ունեմ, որ Սփիւռքը, յատկապէս Սփիւռքի երիտասարդութիւնը, երիտասարդ գործարարները, startup-եր ստեղծող մեր հայրենակիցներն իրենց ուշադրութիւնը կը կենտրոնացնեն Հայաստանի վրայ եւ իրենց գործունէութեամբ կը տեղափոխուեն

հանդէս եկան ՄԴ-ՀԿ-ի ատենապետ Գրիգոր Խոտանեան, ՌԱԿ-ի ատենապետ Ռաֆֆի Պալեան, ՀԲԸՄ-ի ատենապետուհի Թալին Եագուպեան, ինչպէս նաեւ Վիգէն Յովսէփեան եւ կարգ մը այլ ներկաներ, որոնք կը վերաբերէին Հայաստանի ու Արցախը յուզող ժամանակակից հարցերուն, ցարդ կատարուած փոփոխութիւններուն, վարչա-տնտեսական հարցերուն, հայրենիք-սփիւռք փոխ-յարաբերութիւններ-



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA www.gov.am

բերութիւնները, թէ քնիքափոխութիւնը եւ մամուլը, ապա լրատուական միջոցարուումները եւ այլն, կարեւորագոյններէն էր փտածութեան հարցը, որուն պատասխանատուն նկատեց նախկին նախագահ Սերժ Սարգսեանն ու իր ընտանիքը:

տուող Լոս Անճելոսի քաղաքապետական Խորհուրդին եւ անոր արժանի քաղաքապետ Էրիք Կարսեթին, իր ցուցաբերած օգտաշատ ծառայութիւններուն համար, որոնք մեծապէս կը նպաստեն երկու երկիրներու ժողովուրդներ բարեկամական կապերու առաւել ամրապնդումին:

Հանդիպում Լոս Անճելոս Քաղաքապետին Հետ

Կիրակի կէսօրէ ետք ժամը 2:00ին Լոս Անճելոսի քաղաքապետարանի «Ռոթօնտօ» սրահին մէջ տեղի ունեցաւ շքեղ ընդունելութիւն մը ի պատիւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ իր տիկնոջ Աննա Յակոբեանի: Աւելի քան 200 հրաւիրեալներու շարքին էին հայ գաղութի կրօնական եւ քաղաքական ղեկավարներ ինչպէս նաեւ գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ եւ պատասխանատու

Հանդիպում Հայ Գաղութի Ներկայացուցիչներուն Հետ

Երեկոյեան տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ ի պատիւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Տիկ. Աննա Յակոբեանի: Պիլթմոր հիւրանոցի մէջ կայացած սոյն միջոցառումին ներկայ էին շուրջ 700 հոգի: Տօնական մթնոլորտի մէջ գործադրուեցաւ պատշաճ յայտագիր: Վերջապէս հայրենական պերճախօս ելոյթով մը հանդէս եկաւ վարչապետ Ն. Փաշինեան:



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA

Հայաստանի Հանրապետութիւն՝ իրենց նախնիների եւ իրենց հայրենիք», ըսաւ Փաշինեան իր ելոյթին մէջ:

րուն եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամին: Վարչապետ Փաշինեան գոհացուցիչ մեկնաբանութիւններ տուաւ իւրաքանչիւր հարցի մասին նաեւ յայտնելով իր ուրոյն մօտեցումն ու տեսլականը:

Հանդիպում Հայ Գաղութի Ներկայացուցիչներուն Հետ

Կիրակի առաւօտ Պէվըրլի Հիլզի Intercontinental հիւրանոցը ժամադրաւարը դարձած էր Հարաւային Գալիֆորնիոյ հայ գաղութի ներկայացուցիչներուն եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:

Վարչապետի Մամուլի Ասուլիսը

Կիրակի, կէսօրուան մօտ վարչապետ Նիկոլ Փաշինեան շահեկան մամուլի ասուլիս մը տուաւ իր իջեւանած պանդոկի սրահին մէջ, որուն ներկայ էին իր պատուիրակութեան կարգ մը անդամները, ինչպէս նաեւ Լոս Անճելոսի հայ մամուլի եւ հեռատեսիլի ու Հայաստանի լրատուամիջոցներու ներկայացուցիչները:

Հիւրանոցի մեծ դահլիճին մէջ տեղի ունեցած սոյն հանդիպման ներկայ էին շուրջ 80 հրաւիրեալներ: Անոնց մէջ էին հոգեւոր առաջնորդներ, քաղաքական, մշակութա-

Մամուլի ասուլիսի վարչապետ

## ՄԴ-ՀԿ Պատուիրակութեան Հետ

Շարունակուած էջ 1-էն

այս այցը, որքան էլ փորձուած ենք գործնականացնել, աւելի շատ զգացական է ստացուած, քան թէ գործնական: Դա, համեմատելով, վատ է, որովհետեւ աւելի լաւ ֆոն է ստեղծուած մեր երկրի, ժողովրդի հետ կապուած օրակարգի շատ հարցեր շատ աւելի լաւ մթնոլորտում քննարկելու համար: Շատ ուրախ եմ, ողջունում եմ ձեզ, եւ յոյս ունեմ, որ հետագայում էլ մեր շփումները, քննարկումները կը լինեն նոյնպիսին:

փոփոխութիւններուն, Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման, մեր երկրի մէջ իրականացուող բարեփոխումներուն Սփիւռքի ներգրաւման, Հայաստանի տնտեսական առաջընթացի ապահովման ուղղութեամբ ջանքերու համատեղման վերաբերող եւ այլ հարցեր:

Իր կարգին Ընկ. Համբրիկ Սարաֆեան ողջունեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ նշեց, որ ՄԴ-ՀԿ-ն կ'ողջունէ եւ կ'աջակցի Հայաստանի մէջ տեղի ունեցող բարեփոխումներուն: Երբեք չի պարտն վարչապետ, ՄԴ-ՀԿ-ն իր աջակցութիւնը կը յայտնէ Ձեզ եւ Հայաստանի կառավարութեան: Հայրենիքի մէջ իրականացուող ժողովրդավարական, տնտեսական, իրաւական փոփոխութիւններու գործընթացին: Մենք պատրաստ ենք աջակցելու Ձեզ եւ վստահ ենք, որ Ձեր առաջնորդութեամբ կը կարողանանք յաջողութեամբ շարունակել մ'այր Հայաստանի առաջընթացը:

Հայաստանի վարչապետը, անդրադառնալով ՀՀ տնտեսական զարգացման միտումներուն, նշեց, որ իւրաքանչիւր ամսուայ կտրուածքով տնտեսական աճի ցուցանիշները տարբեր ուղղութիւններով երթալով աւելի լաւատեսական կը դառնան, առկայ է լաւ յառաջընթաց, միջազգային հանրութեան արձագանգը եւս կը նպաստէ այդ ընթացքին: Այս փուլում կարեւորում եմ Սփիւռքի հետ հարողակցութեան ճիշդ մթնոլորտի կառուցումը, նկատի ունեմ այն, որ Սփիւռքում օտարուածութեան, կտրուածութեան որեւէ զգացում չպէտք է լինի, Սփիւռքը լիարժէքօրէն պէտք է ներգրաւուած լինի Հայաստանի առաջընթացի գործընթացում: Այդ իսկ նպատակով իմ արտերկիր այցերի ժամանակ հանդիպումներ եմ ունենում Սփիւռքի հայ համայնքների հնարաւորինս լայն շրջանակներին հետ: Կարծում եմ՞ մեր ազգային ներուժը Հայաստանի շուրջ համախմբելու ժամանակն է, ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Հանդիպման քննարկուեցան Հայաստանի մէջ իրականացուող

### Ներկայութեամբ՝ Կարո Փայլանի «Մերժում» ժապաւենի Ցուցադրութիւնը Փարիզի Մէջ



Կարո Փայլան ելոյթ կ'ունենայ Փարիզի մէջ

Ուրբաթ, Սեպտեմբեր 20-ի երեկոյեան, Ալֆորվիլի «Փոլ Գիւլ-թիւրէլ»-ի սրահներէն մէկուն մէջ տեղի ունեցաւ ՄԴՀԿ-ի, անոր եւրոպական կառուցին՝ Armenian Council of Europe-ի եւ երիտասարդական կառուցին՝ «Նագարբեկ»-ի կազմակերպած երեկոյթը, որ համախմբեց շուրջ 400 հանդիսականներ:

Ձեռնարկին յայտագիրը կը բովանդակէր ցուցադրութիւնը՝ թուրք մտաւորական, խմբագիր եւ բեմադիր Քատիր Աքընի «Red» խորագիրը կրող ժապաւենին, որ թրքերէն «մերժում» իմաստով անուանուած է եւ ոչ թէ՛ անգլերէն «կարմիր»-ի իմաստով, ինչպէս նաեւ անոր յաջորդող քննարկում մը:

Անկասկած, երեկոյթին ամենէն նշանակալից երեկոյթը Կարո Փայլանի ներկայութիւնն էր: Հակառակ անոր, որ սկիզբէն նախատեսուած էր անոր մասնակցութիւնը, թուրքերէն քաղաքական ծանօթ իրադարձութիւնները (քրտամէտ քաղաքներու քաղաքապետերու պաշտօնազրկումը) պատճառ դարձած էին, որ Փայլան կամք անկախ յետքայլ ընէ ու յայտարարէ, որ պիտի չկարենայ ներկայ ըլլալ: Բայց ինչպէս երեկոյթի ընթացքին պիտի տեղեկանայինք ֆիլմին բեմադիրին՝ Աքընի իսկ բերնէն, որ Փայլանի կուսակից մըն է ան եւ յաջողած էր կուսակցութեան ղեկավարներուն ալ նեցուկով՝ համոզել Փայլանը, որ զէթ արագ երթուղարձ մը կատարելով Փարիզ՝ անպայման մասնակցի սոյն ձեռնարկին:

Ծայրէ-ծայր լեցուն սրահին մէջ ներկայ էին նաեւ Ալֆորվիլի նախկին քաղաքապետ, երեսփոխան Լիւք Գարվունաս, ներկայի քաղաքապետ Միշէլ Ժերշինովից, CCAF-

ի համանախագահ Արա Թորանեան, ՄԴՀԿ-ի, ՀՅԴ-ի ղեկավար դէմքեր, Ալֆորվիլի ծուխի քահանայ Տէր Տիրայր Գըլըճեան, վեր. Ժիլպէր Լեւոնեան, ինչպէս նաեւ ֆիլմին բեմադիրը՝ Քատիր Աքըն:

Յաջորդաբար խօսք առին ՄԴՀԿ-ի Ֆրանսայի ատենապետ Սարո Մարտիրեան, Միշէլ Ժերշինովից, Լիւք Գարվունաս եւ հուսկ՝ Կարո Փայլան: Ան, ներկաները հայերէնով ողջունելէ ետք, իր խօսքը շարունակեց թրքերէն: Ընդգծեց, որ երեկոյթին բուն աստղը Քատիր Աքընն է, բուն հերոսը, որ համարձակած է մեր հարցին նուիրուած ֆիլմ պատրաստել: Ակնարկելով էրտողանի եւ անոր վարչակարգին՝ ըսաւ, թէ ճիշդ է որ այսօրուան թուրքիան մուլթ պատկեր մը կը պարզէ, բայց ատոր կողքին կայ նաեւ լուսաւոր պատկեր մը, քանի որ միլիոնաւոր մարդիկ կը պայքարին անոնց դէմ: Խօսեցաւ ոճիրներու պատժելիութեան կարեւորութեան մասին, ընդգծելով՝ որ չպատժուած ոճիրները կը կրկնուին եւ այսօր Հայոց ցեղասպանութենէն 100 տարի ետք թրքական պետութիւնը կը պատրաստուի գործադրել Քիւրտերու ցեղասպանութիւնը, ուստի կոչ ըրաւ շարժման լծուելու՝ ատոր արգելք հանդիսանալու համար եւ զօրակցելու՝ թուրքերէն մէջ ժողովրդավարութեան ի խնդիր մղող պայքարին:

Ապա կարգը եկաւ «Red» ժապաւենի ցուցադրութեան: Ֆիլմին նիւթը կը կազմէ ընդհանուր առմամբ՝ թուրքերէն մէջ ընկերավարական շարժումի հիմքը դնելու միտող հայկական շարժումներու, ի մասնաւորի հնչակեան հերոս, ազատատենչ Փարամագի պատմու-



թիւնը:

Ցուցադրութենէն ետք Փայլանի, Մարտիրեանի եւ Աքընի մասնակցութեամբ տեղի ունեցած քննարկումին՝ վերջինս պատմեց, թէ ինչպէս դիպուածով ծանօթացած է Փարամագի անձնաւորութեան, երբ ինք ամսագրի մը խմբագրապետն էր եւ իրեն ներկայացուած էր հայ հերոսին մասին յօդուած մը: Աքընի ըսածներուն մէջ ամենէն կարեւոր կէտերէն մէկը, որ ինչպէս բազմաթիւ այլ բնագաւառներու, ընկերավարութեան համար ալ իրենց սորվեցուցած են, որ ամէն ինչ կը սկսի թուրքով մը, թուրքի մը անունով, մինչ ատկէ առաջ Հայեր արդէն մեծ ներդրում ունեցած են տուեալ բնագաւառին մէջ, ինչպէս Փարամագը ունեցեր էր ընկերավարութեան հաստատման մէջ, եւ արդէն 117 տարի առաջ ան վանի դատարանին առջեւ պաշտպանած էր այդ գաղափարախօսութիւնը՝ ընկերավարական տեսլականը: Ըսաւ, թէ իրականութեան մէջ ինք այս ժապաւենը պատրաստած է թուրքերէն ընկերավարականներուն եւ պատմաբաններուն համար, քանի որ անոնք են երկրին մտաւոր առաջնորդները եւ աւեցուց որ այդ ջանքը այսօր արդիւնք կու տայ, քանի որ մարդիկ սկսած են հետաքրքրուելու ՀՅԴ-ով, ՄԴՀԿ-ով, ՌԱԿ-ով: Իր խօսքը եզրափակեց ըսելով՝ թէ անցեալին հետ առերեսիլ թոյլ պիտի տայ վերստին եղբայրաբար ապրիլ բոլորս միասին, ինչ որ ընկերավարական գաղափարախօսութեան զխաւոր դրոյթներէն է:

Կարո Փայլան իր կարգին ըսաւ, որ թուրքի մը բերնէն լսեցինք Փարամագի եւ անոր պաշտպանած տեսլականին մասին: Քննադատելով «բոլորը մէկ տոպրակի մէջ դնել»-ու մօտեցումը, յիշելով նաեւ թուրքին մասին Հայերու նախասիրած՝ «սոխին անուշը չըլլար» ասացուածքը, հարց տուաւ՝ «հապա ի՞նչ պիտի ընենք Քատիր Աքընը եւ իր նմանները», եզրա-

կացնելու համար, թէ այդպիսիները մեր կարծածէն շատ աւելի մեծ թիւ կը կազմեն:

Խօսեցաւ նաեւ պապենական արմատներուն, անոնց բնիկ հողերուն մասին տեղեկացուած ըլլալու հրամայականին մասին, նշելով՝ որ Յեղասպանութենէն ետք 2-րդ եւ լաւագոյն պարագային՝ 3-րդ սերունդէն յետոյ խզուած է այդ կապը եւ ատիկա կը նշանակէ թէ 105 տարի է մեր մղած պայքարը ձախողած է եւ այդ մասին հիմա վերստին պէտք է մտածել: Փարամագ չկրցաւ իրականացնել իր երազանքները, ոչ ալ մենք կրցանք իրականացնել զանոնք, ըսաւ ան ու հարց տուաւ. «միթէ՞ ատոնք իրականացնելը, երկիրը ֆաշականութենէ ազատագրելը մեր ալ պարտականութիւնը չէ»: Փայլան նաեւ ըսաւ, թէ շատեր իրեն կ'ըսեն. «Լուէ՛, նայէ ինչ պատահեցաւ Հրանդին», բայց «ինչ որ մեր գլխուն եկաւ, խօսելու պատճառով չէ, որ եկաւ», ըսաւ ան, աւելցնելով որ լուէ՛ ինչ է վտանգաւորը:

Ապա, Փայլանի առաջարկով, յոսնկայս մէկ վայրկեան լուսութեամբ յարգուեցաւ Փարամագի եւ իր հետ կախողան բարձրացած անոր 19 ընկերներուն յիշատակը:

Փայլան իր խօսքը աւարտեց ըսելով, որ կ'առաջարկէ «թուրքերին, Քիւրտերին հետ պէտք չէ խօսիլ»-ի մտայնութիւնը մէկդի թողլով գորակցիլ թուրքերոյ այն միլիոնաւորներուն, որոնք կը պայքարին ի խնդիր ժողովրդավարութեան հաստատման: Ըսաւ նաեւ, որ Երեւանը, Հայաստանը անշուշտ որ կարեւոր են, բայց Արեւմտահայաստանն ալ կարեւոր է: Հուսկ, հայերէն՝ «Կեցցէ՛ Փարամագը» ըսելով աւարտեց իր խօսքը:

Երեկոյթի աւարտին շատ-շատեր փութացին Փայլանի քով, անոր հետ յիշատակի նկար մը ունենալու համար. ան բոլորին ալ մէկ առ մէկ, սիրով ընդառաջեց:

Յ.Կ.  
«ՆՈՐ ՅԱՌԱՋ»



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

HEALTH INSURANCE  
&  
MEDICARE (age 65 and over)

Open Enrollment 2020  
Starting Oct. 15, 2019

We will help you!

Consult for free with one of our Agents today!

**(818) 500 9585**

805 E. Broadway, Glendale, CA 91205  
sbmaronian@gmail.com  
CA INSURANCE LICENSE # 0C99815

**MaronianInsurance.com**

# Փաշինեան Լոս Անճելոս-Յայաստան Զամաժողովին Ներկայացուց Տնտեսութեան Ուղղութիւնները Այս Այցելեց Սիլիքոնային Զովիտ



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA www.gov.am



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA www.gov.am

Միացեալ Նահանգներ այցի-երկրորդ օրը վարչապետ Նիկոլ-Փաշինեանը սկսաւ Լոս Անճելոսի մէջ տեղի ունեցող տնտեսական համաժողովէն:

Լոս Անճելոս-Հայաստան համաժողովին կը մասնակցէին մօտ 300 տեղացի գործարարներ, Քալիֆորնիա նահանգը ներկայացնող գործատէրներ, որոնց Հայաստանի ղեկավարը պատմեց երկրի ներդրումային միջավայրի մասին, ըսելով, որ իշխանափոխութենէն ետք հիմա ալ տնտեսական յեղափոխութիւն ծրագրած է:

Փաշինեան ընդհանրապէս Հայաստանի տնտեսութեան գե-

րակազողողութիւնները՝ տեղեկատուական տեխնոլոգիաներ, գիւղատնտեսութիւն, զբօսաշրջութիւն: Վարչապետը ըսաւ, որ իր քաղաքականութեան առանցքը քորուփցիայի եւ մենաշնորհներու բացառումն է:

Օրուայ երկրորդ կէսին Հայաստանի վարչապետը Լոս Անճելոսէն ժամանեց Սան Խոսէ՝ աշ-

խարհահռչակ Սիլիքոնային հովիտ, ուր տեղակայուած են հանրայայտ ընկերութիւններ: Ինչպէս յայտնի է, այստեղ նաեւ բազմաթիւ հայեր կ'աշխատին՝ հիմնական վերջին տարիներուն Հայաստանէն այստեղ եկած տեղեկատուական թեխնոլոգիաներու մասնագէտներ, որոնց հետ վարչապետը մօտ մէկ ժամնոց հանդիպում ունեցած է, պատաս-

խանած է անոնց հարցերուն: Սիլիքոնային հովիտին մէջ վարչապետը եղած է Nvidia խոշոր ընկերութիւն, նաեւ այցելած է Synopsis: Անհետաքրքրուած էր ինչպէս զարգացած է այս ոլորտը, ինչ ճանապարհ անցած է, եւ նաեւ փորձած էր ըմբռնել, թէ Հայաստանի մէջ ինչպէս կարելի է կիրառել այս փորձը:

## Յայաստանը Դեսպանութիւն Պիտի Բանայ Իսրայէլի Մէջ

Կառավարութիւնը որոշած է, որ Հայաստանը դեսպանութիւն պիտի ստեղծէ Իսրայէլի, Թէլ Աւիւ քաղաքին մէջ:

Թէեւ Հայաստանը այդ երկրի մէջ ունէր ոչ մշտաբնակ դեսպան եւ 1992 թուականէն հաստատուած դիւանագիտական յարաբերութիւններ, այնուամենայնիւ չունէր դեսպանութիւն:

«Իսրայէլում դեսպանութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է այն հանգամանքով, որ մեր ձախարհը երկու տարածաշրջանում Իսրայէլը հանդիսանում է կարեւոր աշխարհաքաղաքական դերակատար, որի վարած քաղաքականութիւնը ուղղակիորէն ազդում է այդ տարածաշրջանի վերածախառնման եւ կայունութեան վրայ: Դեսպանութիւն ստեղծելը միտուած է ապահովելու Հայաստանի պետական մակարդակով բազմադարեայ հայկական ներկայութեանը մասնակից լինելը», - կառավարութեան նիստին հիմնաւորած է արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը:

Մնացականեանը աւելցուցած է, որ դեսպանութիւն ստեղծելուն Արտաքին գործոց նախարարութիւնը կը պատրաստուէր բաւական ժամանակ:

Արտաքին գործոց նախարարութիւնը կառավարութեան որոշման հիմնաւորումներուն մէջ գրած է, որ «դեսպանութեան ստեղծելը կը նպաստի երկկողմ յարաբերութիւններ խորացմանը, նոր հարաւորութիւններ կը ստեղծի համագործակցութեան բազմաթիւ ոլորտներում»:

Կազմակերպութեամբ ՄԳՀԿ Սապահ Գիւլ Մասնաճիւղի

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ**

Տեղի կ'ունենայ Ծաբաթ, Հոկտեմբեր 5, 2019 երեկոյեան  
Ժամը 7:30-էն սկսեալ:

Մուտքի նուէր՝ \$65

Վայր՝ 9537 Shoshone Ave., Northridge, CA 91325  
Տեղերը ապահովելու համար՝  
Հեռ. 818-648-6270, 559-313-0147

ՃԱՇԱՅՈՒՅԱԿ. Ուրֆաի Բեպապ, Համի Բեպապ,  
Աղսաններ, Քաղցրեղէն եւ Սուրճ

**ARMENIAN NIGHT**

Saturday, October 5, 2019 from 7:30 pm  
MENU: Ourfa Kebab, Chicken Kebab, Appetizers.  
Dessert & Coffee

RSVP: by September 28, 2019  
Tel: 818-648-6270, 559-313-0147

Donation: \$65

Wine & soft drinks are included.

### Յետ Մահու Մեծարանքի Երեկոյ Ցեղասպանագէտ Վահագն Տատրեանի Պոլսահայ Միութեան Կեդրոնին Սեջ



#### ՄԱՐԻԹ Ա. ՕՂԱՆԵՍ

Կիրակի, Սեպտեմբեր 15, 2019ին, Պոլսահայ Միութեան «Գուրեան Տանիքը» տեղի ունեցաւ յուշ երեկոյ, քառասունքի հոգեհանգիստ, հանգուցեալ Ցեղասպանագէտ Փրօֆէսոր Վահագն Տատրեանի:

Երեկոն սկսաւ տուտուկահար Ալպէրթ Վարդանեանի տուտուկի մեղեդիներով: Բացման խօսքը կատարեց Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ եւ Հոգաբարձու՝ Տոքթ. Յովհաննէս Գուլախ Աւետիքեան, որ ներկաները ողջունելէ ետք, հրաւիրեց բոլորը չտոնկալս վայրկեան մը յարգանքի տուրք մատուցանելու հանգուցեալ Հրանդ Տինքի, Փրօֆ. Տատրեանի եւ Եղեռնի մէկ ու կէս միլիոն նահատակներուն ի յիշատակ, ապա հրաւիրեց Հոգեւորականաց դասը՝ առաջնորդութեամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանի, քառասունքի առթիւ հոգեհանգստեան պաշտօն կատարելու եւ օրհնելու յիշատակի համար պատրաստուած հրուշակը:

Յովնան Սրբազան խոնարհումով յիշեց Փրօֆ. Տատրեանը որուն անձամբ ճանչցած էր Առաջնորդարանի յարկէն ներս՝ իրեն ձօնուած հանդէսով մը եւ ան բաժնուելով հանդերձ այս կեանքէն, մեզ կը թողու հրաշալի ժառանգ մը որ հայ մարդը իր բովանդակ կեանքին մէջ, ըլլալ անհատական կամ մեր հաւաքական կեանքին մէջ բնաւ չենք մոռնար Հայոց Ցեղասպանութիւնը: Եթէ մենք կ'ուզենք յաւիտեան պարիսպ, պէտք է խոնարհիլ Հայոց Ցեղասպանութեան նահատակներուն դիմաց: Սրբազանը յորդորեց բոլորը արթնուն պահել գիտակցութիւնը, ծանօթանալ եւ ամբողջապէս մերը դարձնել այն բոլոր գիտելիքներն ու փաստարկուածները որոնցմով ան Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելի դարձուց ոչ միայն մեր ժողովուրդի զաւակաց համար, այլ բոլոր ազգերու ժողովուրդին համար:

Ներկայ էին նախկին առաջնորդ Գերշ. Վահէ Արք. Յովսէփեան, Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան (ներկայացուցիչ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի) Արժ. Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեան, Արարատ Էսկիճեան Տուն Թանգարանի տնօրէնուհի՝ Տիկ. Մէլի Մանկասարեան-Կօշին, Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ ներկայացուցիչ՝ Փիթըր Հայկ, Հայ Աւետարանական եկեղեցւոյ ներկայացուցիչներ՝ Վերապատ-

ուելիներ Յովսէփ Մաթոսեան եւ Տիգրան Շանլեան, Հայ Ցեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչ՝ Աւետիք Իզմիրլեան, Ս.Դ.Հ.Կ. ներկայացուցիչներ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան ներկայացուցիչ՝ Դաւիթ Սամուէլեան, Հայ Դատի Հովանեացի Համագործակցութեան Կաճառի, Վարդանանց Ասպետներու, ՀԲԸՄի ներկայացուցիչներ, Հայկական դպրոցներու տնօրէններ եւ ուսուցիչներ, Ապրիլի 24ի Միացեալ Մարմնի ներկայացուցիչներ, Պոլսահայ Միութեան նախկին ատենապետներ եւ վարչականներ, Փրօֆ. Օշին Քէշիշեան, Տիար Սարգիս Վահագն եւ յարգելի Փրօֆ. Թանէր Աքչամ եւ այլ հիւրեր:

Երգուցեալ Տէրունական աղօթքը, որ մէ ետք Տոքթ. Աւետիքեան ամպիրոն հրաւիրեց Միութեան Հոգաբարձու թեան ատենապետ՝ Իրաւաբան Էսովին Մինասեանը որ իր կարգին հրաւիրեց օրուան հանդիսավար՝ Իրաւաբան Կարօ Ղազարեանը:

Իրաւաբան Ղազարեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հանգուցեալ Տատրեանի մասին շեշտելով թէ՛ վեհ անձի մը կորուստը անմահացման հրաւէր մըն է որովհետեւ սկզբունքային եւ գործնական իրականութեան մէջ տարբերութիւնը շատ քիչերու պարագային այսքան յստակ է: Ան շեշտեց նաեւ թէ Տատրեան իր կեանքին ընթացքին մեզի պարզեցեց գիտամշակութային ժառանգ ապագայ սերունդներուն: Այս մեծանուն պատմաբանին մասը՝ որպէս հայ աշխարհին ցաւը որակեց ան: Տատրեան իր անժամանց մասով ապրեցաւ յանձն նպատակի, նուաճելով բազմազան խոչընդոտներ, վառ պահելով Հայոց Ցեղասպանութեան ջանք անմահացնելով մեր նահատակները եւ ինք ալ իր յանդուգն գրիչով անմահացաւ մեր ազգային պայքարի պատմութեան մէջ: Կերտելով իր յաջորդը, իր աշակերտը՝ մեր այսօրուան հիւրը՝ Փրօֆ. Թանէր Աքչամը: Ապա ան անդրադարձաւ անգլերէն լեզուով հանգուցեալին մասին:

Հրաւիրեց դարձեալ տուտուկահարը որ նուազեց Կոմիտասեան մեղեդիները:

Հրաւիրուեցան Տոքթ. Աւետիքեան եւ Իրաւաբան Մինասեան որպէսզի կատարեն մետալի տուղութիւնը Փրօֆ. Թանէր Աքչամի կենսագրականը կարդալէ ետք, Տոքթ. Աւետիքեան յայտարարեց թէ այս տարի որոշեցին սոյն մետալը շնորհել,

### «Ձուարթնոց» Մշակութային Յանձնախումբ Յորելենական Համերգ՝ Նուիրուած Կոմիտաս Վարդապետի 150 Ամեակին

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի «Ձուարթնոց» Մշակութային Յանձնախումբը սիրով կը ներկայացնէ յորելենական համերգ՝ նուիրուած երգահան, երաժշտագէտ, խմբավար, ազգագրագէտ եւ երաժշտահաւաք մեծն Կոմիտաս Վարդապետի 150 ամեակին:

Բացառիկ այս համերգը տեղի պիտի ունենայ Կիրակի, Նոյեմբեր 10, 2019ին, երեկոյեան ժամը 6ին, Առաջնորդարանի Սրբ. Ղեւոնդեանց Մայր Տաճարէն ներս (3325 North Glenoaks Boulevard, Burbank, CA 91504):

Ելուցի պիտի ունենայ հեղինակաւոր «Կրամմի» մրցանակի ներկայացուած սոփրանօ Իզապել Պայրաքտարեան՝ ընկերակցութեամբ երաժիշտներու Լոս Անճելըսէն, Ֆրեզնոյէն եւ Գալիֆորնիոյ Սանթա Պարպարայի համալսարանէն: Պիտի նուազակցի Ֆրեզնոյի Coro Vox Aeterna նուազախումբը՝ խմբավարութեամբ Աննա Հէյմերի:

Հայարդի երաժշտական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի ծննդեան 150 ամեակին նուիրուած այս ընդգրկուն համերգը պիտի ներառէ զանազան ստեղծագործութիւններ: Նշենք, որ այս տարի ԵՈՒՆԵՍԿՕ-ն եւս մեծ շուքով տօնախմբեց Կոմիտասի 150 ամեակը:

Պիտի հնչեն նոր եկեղեցական եւ աշխարհիկ մշակումներ երգ-



չախմբի եւ սոփրանօի համար դաշնակորմամբ, մանկական երգերու եւ աղօթքներու փունջ մը՝ սրնգի, տաւղի եւ սոփրանօի համար դաշնակորմամբ, ինչպէս նաեւ ժողովրդական երգեր՝ սոփրանօի եւ լարային քառեակի համար դաշնակորմամբ: Lively Arts հիմնադրամի եւ Պայրաքտարեանի գլխաւոր նպատակը այս համերգին միջոցաւ ներկայացնել Կոմիտասի համամարդկային արժէքն ու մեծութիւնը, որ հոգիներ կը թափանցէ, սրտեր եւ մտքեր կը զմայլի, եւ կը կամրջէ անցեալն ու ապագան:

Տոմսակներուն արժէքներն են՝ 35.00, 50.00, 100.00 տոլար: Զանոնք կրնաք ապահովել՝ հեռաձայնելով 818-558-7474 X 0.

Տատրեանի գործակից պատմաբան եւ ընկերաբան Փրօֆ. Թանէր Աքչամի, որ առաջին անգամ ըլլալով հայ եւ թուրք երկխօսութիւնները ակադեմիական մակարդակով միասնաբար կատարած են: Տոքթ. Աւետիքեան ընթերցեց կարգ մը անցեալի գրոյց իրողութիւններ իր եւ Տատրեանի միջեւ կայացած:

Խօսք առաւ իրաւաբան Մինասեան յայտնելով, որ սա յատուկ երեկոյ է մեզ համար, մենք պատիւ կ'ընծայենք այն 2 տղամարդկանց, որոնք անցան ու գերազանցեցին կրթութիւնը ակադեմիային մէջ, թէ՛ որպէս ուսանողներ, թէ՛ ուսուցիչներ, թէ՛ որպէս հեղինակներ: Անոնք պայքար ստան ձեռքին հաւաքուցիներու-հանրահաւաքներու մեր անվտանգ սահմաններէն այն կողմ՝ յայտարարելու, թէ ի՞նչ պիտի ցեղասպանութիւն տեղի ունեցած է, եւ ինչպէ՞ս ան ոչնչացուցած է մեր ներկայութիւնը մեր պատմական հայրենիքին մէջ, ինչպէ՞ս մենք կը պահանջենք հատուցում եւ արդարութիւն: Անոնք 2 հոգի են, որոնք ստանձնեցին հակառակորդի դաշտը, 2 տղամարդիկ, որոնք կը տիրապետեն այս պայքարը անհրաժեշտ գործիքներով պայքարի արիւթեան համար, որոնք կը դիմադրեն անձնական եւ ընտանեկան անվտանգութեան սպառնալիքներուն, ակադեմիական սեւամորթներու քրտնաշան արշաւներուն, պետական ֆինանսաւորմամբ ընդդիմութեանը եւ ակադեմիական վարձու գէնքերուն: Որոնք իրենց մակերեսային հաւատարմագրերով անողոք կը խօսին եւ կը գրապարտեն ձեզ համար գրեթէ անասնամայակ պետական տուգանքէն, այնպէս որ անոնց աղբիւրներով անոնք դիմակայեցին չարութիւնը քաջութեամբ, որ այդ

յաղթելու միակ միջոցն էր: Անոնք իրենց սերունդի հակառակն են, որոնք պատմութեան աղեղը կը դարձնեն իրականութեան մէջ թեքուելու դէպի արդարութիւն: Տատրեանը եւ Աքչամը կը սորվեցնէին իրենց ժամանակակիցներուն եւ ապագայ սերունդներուն Հայոց Ցեղասպանութեան բոլոր չարիքները, որուն կողմէ կատարուած էր այն, ինչն էր այն նախադրեալը՝ մեծ տէրութիւններու անտարբերութիւնը ցեղասպանութեան յետոյ եւ անոր ընթացքին, որոնք նպաստեցին անոր եւ ապագայ ցեղասպանութիւններուն ու Հոլոքսթին:

Մինասեան յայտնեց, որ Փրօֆ. Աքչամը նոյն իրավիճակին առջեւ պիտի կանգնի տուժածներուն, հրեշտակներուն, ինչ-որ մէկուն, յատուկ անձի մը, որուն ծննդեան օրը պիտի նշուի այսօր, կը դառնար 65 տարեկան, իր յարգելի ընկերը՝ Հրանդ Տինք: Եւ ո՞վ կ'անդրադառնայ իր աչքերուն մէջ եւ կ'ըսէ, թէ ի՞նչ ըրած էք: Եւ ես կը պատասխանեմ, որ չեմ մոռցած ձեզ եւ ձեր ժողովուրդին՝ Հրանդ: (Նշենք թէ Պոլսոյ մէջ ամէն տարի Սեպտեմբեր ամսու 15ին «Հրանդ Տինք Միջազգային Մրցանակ»ը կը տրուի):

Shot in Geneva, Basel and Istanbul in high-definition, “Red” features a myriad of extracts from reports and archival images. It was first premiered in Istanbul on October 12, 2017 in the presence and support of Garo Paylan.

# Լիբանան Նոր Սերունդի Պարը Յանուն «Նոր Հայաստան»-ին



## ՇԻՐԱԶ ԾԵՐԵՃԵԱՆ

Նոր Սերունդը կը պարէ Նոր Հայաստանի համար: Անցնող շաբաթավերջին, Սեպտեմբեր 20-էն 22, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 28-րդ տարեդարձի օրերուն, Նոր Սերունդ Մշակութային Միութեան ԱՐԵԳ պարախումբը ներկայացուց իր տարեկան մեծ ելոյթը, զան նուիրելով վերջին շրջանին զարգացումի վերածնունդ ապրող հայրենիք Հայաստանին ու հայ ժողովուրդին: Երեք օրերուն լինթաքին, ԱՐԵԳ պարախումբի անկախ 70 պարողները լիբանանահայ եւ օտարազգի այցելու հանդիսատեսին ներկայացուցին իրենց տարուան մը աշխատանքը՝ «Նոր Հայաստան» ելոյթը՝ գեղարուեստական դեկավար եւ պարուսույց Շահէ Տեմիրճեանի գլխավորութեամբ:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան համոզումով, «խաղաղ եւ պայծառ ապագայ կերտելու համար պէտք է նպատակ ունենալ երկրի եւ ժողովուրդի կեանքի բարելավումը բոլոր բնագաւառներէն ներս: Անշուշտ այս առումով արուեստի բնագաւառը կը գրաւէ առաջատար դիրքեր, որովհետեւ ժողովուրդի մը գոյատեւումը, զարգացումն ու ինքնութեան պահպանումը դժուար պիտի ըլլար իրագործել առանց մշակույթի պահպանման եւ տարածումին, մանաւանդ նոր սերունդի ներկայացուցիչներու շրջանակներուն մէջ:

Միութիւնը նաեւ կը հաւատայ միասնականութեան կարեւորութեան, կ'աջակցի նոր Հայաստանի զարգացումին, հայրենիքը համարելով սկզբունքներն ու գաղափարները ակնյայտ էին Սին էլ Ֆիլիքադաբապետարանի Նապիլ Քահալէի անուան սրահի բեմին վրայ, ուր կրտսերագոյն պարողէն մինչեւ երեցագոյն երիտասարդի պարային շարժումներուն, ապրումներուն եւ դէմքի արտայայտութիւններուն վրայ ակնյայտ էր հայրենիքի հանդէպ սէրը եւ նոր Հայաստանը աւելի եւս պայծառացնելու սիրուած քահայուն կամքն ու կորովը:

ԱՐԵԳ պարախումբի անդամները նաեւ չմոռցան իրենց նախասիրած միջոցով՝ պարելով յարգելու յիշատակը իրենց խմբակից վաղամեռիկ պարմանուհի Մնժեւլա Թօսունեանի, որ տակաւին մօտիկ անցեալին ԱՐԵԳ-ի շարքերէն բեմ կը բարձրանար, հանդիսատեսին ներկայացնելու համար լաւագոյնը: Սակայն այս տարի, անոր ակամայ բացակայութեամբ, կարծէք ԱՐԵԳ-ի անդամները վճռած էին տիրութիւնը վերածել ուրախ յիշատակներու վերականգման առիթի: Եւ որովհետեւ բաւեր չկային արտայայտելու կորուստի ցաւը, պարախումբի տղաներն ու աղջիկները դիմեցին իրենց նախասիրած լեզուին՝ պարին, պարմանուհի յիշատակը յարգող երաժշտութեան հնչիւններուն ներքեւ, միաժամանակ յուզմունք եւ երախտագիտութեան զգացում յառաջացնելով հանդիսատեսին մօտ:

ԱՐԵԳ-ի վարչական եւ գեղարուեստական դեկավարութիւնը նաեւ չէր մոռցած յարգելու յիշատակ մը եւս՝ մեծանուն ֆրանսահայ արուեստագէտ, երգիչ Շարլ Ազնաւուրի յիշատակը, որուն երգերէն փունջով մը պարեցին խումբի մեծ տղաներն ու աղջիկները: Բնականաբար, հայկական պարի ելոյթ մը անկատար կ'ըլլայ առանց հայկական Քոչարիի, պարեցին թէ՛ չափահասները, թէ՛ փոքրերը՝ վերջիններս պարուսույց Սարին Տեմիրճեանի հսկողութեամբ եւ ցուցաբերելով համար դժուար պիտի ըլլար համոզուիլ, թէ խորքին մէջ հայ պատանիներ եւ պարմանուհիներ են այս միջազգային պարերու կատարողները: Այսուհանդերձ, հայը վերջ է վերջոյ պիտի վերադառնայ իր արմատներուն եւ փորձէ զանոնք աւելի եւս ամրապնդել: Հայաստանի անկախութեան 28-ամեակը միասնաբար տօնեցին ԱՐԵԳ-ի անդամներն ու

տակ մը եւս՝ մեծանուն ֆրանսահայ արուեստագէտ, երգիչ Շարլ Ազնաւուրի յիշատակը, որուն երգերէն փունջով մը պարեցին խումբի մեծ տղաներն ու աղջիկները: Բնականաբար, հայկական պարի ելոյթ մը անկատար կ'ըլլայ առանց հայկական Քոչարիի, պարեցին թէ՛ չափահասները, թէ՛ փոքրերը՝ վերջիններս պարուսույց Սարին Տեմիրճեանի հսկողութեամբ եւ ցուցաբերելով:

անձանօթի մը համար դժուար պիտի ըլլար համոզուիլ, թէ խորքին մէջ հայ պատանիներ եւ պարմանուհիներ են այս միջազգային պարերու կատարողները: Այսուհանդերձ, հայը վերջ է վերջոյ պիտի վերադառնայ իր արմատներուն եւ փորձէ զանոնք աւելի եւս ամրապնդել: Հայաստանի անկախութեան 28-ամեակը միասնաբար տօնեցին ԱՐԵԳ-ի անդամներն ու



## մունքներով:

Հայկական պարերու շարքեր կարելի է նաեւ առանձնացնել «Մախմուր աղջիկ», «Նազանի» եւ «Կատակ պար» պարերը, որոնց միջոցաւ հանդիսատեսին ներկայացուցան հայ աղջիկներու հեզաճկուն շարժումները եւ միշտ կատակասէր հայու ուրախ ոգին:

Կառչած մնալով հանդերձ հայկական մշակույթին, հայ երիտասարդը միաժամանակ պատրաստ է ծանօթանալու այլ մշակույթներու եւ իր պարային հմտութիւնները աւելի եւս զարգացնելու այլ շրջագիծերու մէջ: Այս առումով, ԱՐԵԳ պարախումբը բեմը գունաւորեց համաշխարհային երանգներով՝ մեքսիկական, ռուսական, քնչուական եւ եգիպտական պարերով, որոնք բոլորն ալ կատարուեցան բացառիկ վարպետութեամբ, այնպէս որ

հանդիսատեսները, մերթ բարեւ տալով հայրենիքին, մերթ հայկական «Նոր պարով», միշտ հայու հպարտ քայլերով եւ ոստիւններով: Իսկ ելոյթի աւարտին բեմին վրայ բարձրացած բերդը պարզապէս վերջիջեցում մըն էր, որ Նոր Սերունդ մշակութային միութիւնը եղած է ու կը մնայ հայ նոր սերունդներու հայկական ինքնութեան եւ մշակութային արժէքներու պահպանման անառիկ ամրոցը՝ բերդ մը, զոր ոչ օտարութեան հրդեհը, ոչ ալ մեր ազգային արժէքները խաթարող թշնամական ուժեղագոյն քամիները կարողութիւն ունին խորտակելու, որովհետեւ իւրաքանչիւր արհաւիրքէ ետք դարձեալ պիտի յայտնուի Նոր Սերունդի հայը, կառուցելու համար մեր բոլորին յաւերժական տունը՝ պայծառ Նոր Հայաստանը:

# Դիլիջան Համերգաշարի Յոբելեանական Տարեշրջանի Բացումը Լուսարձակում է Բենջամին Բրիտտենին

Քննադատօրէն ողջունուող «Դիլիջան» սենեկային երաժշտութեան համերգաշարը յայտարարուած է իր յոբելեանական 15-րդ տարեշրջանի բացման համերգը՝ 2019 թուականի Սեպտեմբերի 29-ին, ժամը 3-ին, «Զիփեր» համերգասրահում: Տիրական երկու գործերը Բենջամին Բրիտտենի, ով սիրում էր հանգստանալ Դիլիջանում (Հայաստան), 1960-ականներին, Շոտա Կովիչի եւ Ռոստրոպոփիչի հրաւերով, այս համերգի վերջաբանն են՝ նրա վաղ շրջանի (1932) Ֆանտազիան հոբոյի քառեակի համար եւ ուշ շրջանում (1975) աւարտած զարմանալի թիւ 3 Լարային քառեակը:



Թիւ 5 եւ Արեւմտեան ափում առաջին անգամ կատարուող վաչէ

Շառաֆեանի «Գիշերային ժամի հրավառութիւններ»ը՝ գրուած Չուլիսի եւ վիոլայի համար: Հռչակաւոր կատարողներն են՝ Չուլիս Կահար Վարդի Մանուէլեանը (LA Philharmonic) եւ Մովսէս Պողոսեանը («Դիլիջան»ի գեղարուեստական դեկավար եւ UCLA համալսարանի Չուլիսի պրոֆեսոր), վիոլիստ Չէ Եէն Չէն («Ֆորմոզա» քառեակ եւ UCLA համալսարանի վիոլայի պրոֆեսոր), թաւջութակահար Քլայվ Գրիմսմիթը («Քոլբերըն»ի պրոֆեսոր եւ անցեալում «Տոկիո» քառեակի անդամ), նաեւ LA Philharmonic-ում հոբոյ նուագող Անն Մարի Գաբրիելը, «Դիլիջան»ում իր առաջին ելոյթով:

«Դիլիջան» համերգաշարի յոբելեանական 15-րդ տարեշրջանը ներկայացնում է հնի եւ նորի, ճանաչուածի եւ չճանաչուածի հրաշալի մի հաւաքածոյ: Արեւմտեան դասական երաժշտութեան՝ Բեթհովենի, Բրամսի, Շուբերտի եւ Հայդնի սիրուած գլուխգործոցները պիտի կատարուեն կողք-կողքի Կոմիտասի, Յարութիւնեանի, Մանսուրեանի, Շարաֆեանի եւ այլ հայ կոմպոզիտորների գործերի հետ: Բացի «Դիլիջան» վերադարձող սիրելի արուեստագէտներից, ինչպիսիք են երգչուհիներ Թոնի Աւնտլըրը եւ Շուշիկ Պարսումեանը,

# Վախճանման 85-Ամեակ (1846-1934) Ստեփաննոս Արքեպիսկոպոս Յովակիմեան Կորովի եւ Երկարամեայ Առաջնորդ Նիկոմիդիոյ եւ Պուլկարիոյ

«Ստեփաննոս Արքեպիսկոպոս ամբողջ իր հովուութեան շրջանին իր ժողովուրդին եւ ամենքէն սիրուած եւ յարգուած եկեղեցական մը եղաւ, եւ իր անբամբաս կենցաղին, անդադրում գործունէութեան, եւ աւետարանական բազում շնորհներով զարդարուած՝ հայրը եղաւ բոլորին»  
**ԹՈՐՈՒՄ ՊԱՏՐԻԱՐԷ ԳՈՒՇԱԿԵԱՆ**

**ՂԱԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

### Կորովի Առաջնորդը

Ութսունհինգ տարիներ առաջ իր 88 յառաջացեալ տարիքին Սոֆիայի մէջ պաշտօնի վրայ կը վախճանէր Ստեփաննոս Արքեպիսկոպոս Յովակիմեան բազմաբեղուն Առաջնորդը Նիկոմիդիոյ (Իգմիր) եւ Պուլկարիոյ թեմերուն փոթորկալից եւ անձնդիր իր պարտականութեանց լրումին: Որքան դիպուկ են Երուսաղէմի Պատրիարք Հօր վերեւի նշումները՝ «անբամբաս կենցաղ, անդադրում գործունէութիւն եւ աւետարանական շնորհներ»: Այս մեծ հոգեւորականը, որ 19-րդ եւ 20-րդ դարերու խաչմերուկին գլուխն անցաւ իր հօտին որպէս իսկական հայր դիմադրելով թրքական կրկնակի հալածանքներուն, մնաց միշտ իր ժողովուրդին հետ, պաշտպանելով անոնց կրօնքն ու ազգութիւնը:



Եւ Համագասպ Եղիսէեան վարդապետները: Իր թեմէն ներս աւելի կանուխ Սրբազանը ձեռնադրած էր նաեւ Մկրտիչ Աղաւունի եւ Կարապետ Մազլըմեան վարդապետները որոնք յետագային եպիսկոպոսանալով եղան մին Եգիպտոսի եւ միւսը Յունաստանի թեմակալ Առաջնորդները: Իր երկարամեայ առաջնորդական շրջանին Ստեփաննոս Արքեպիսկոպոս կառուցանել տուած է եկեղեցիներ, դպրոցներ եւ նոյնիսկ գիւղեր, անոնց տարով իրենց անունները՝ Գեղամ, Արաք, Մանուշակ, Հովիւ, եւ Արմաւիր Գիւղեր:

Իր քաջակորով միջամտութեամբ ձեռքաւարտուած բազմաթիւ հայորդիներ ազատած է թրքական խստութիւններէ որոնք ամբաստանուած էին այս պատրուակով որ 1913 թուին Ատափագարի մէջ հայերէն գիրերու գիւտի (406) եւ առաջին գիրքի տպագրութեան (1513) կրկին յրեւելիական տօնակատարութեանց ընթացքին դժբախտ պատահարի մը ենթարկուելով, 18 հոգի, ձեռքաւարտուած էին եւ որպէս մահապարտ բանտարկուած: Ստեփաննոս Արքեպիսկոպոս Սրբազան բողոքի դիմում կատարած է Բարձր Դրան մօտ եւ գիւղացիի իր ճարտարամտութեամբ «Ատափագարի խոշոր ու նշանաւոր դղումներէն 18 հատ գարդարուն ծրարներով Սուլթան Ռեշատին ղրկած է, որուն ի պատասխան ձեռքաւարտուածները բանտէն ազատած են»:

Երբ կը կարգալի «Պարտիզակն ու Պարտիզակցին» հատորը յատկանշական պարագայ մը նկատեցի, շատ պարզ, որ ինքնին դաս մըն է հոգեւորականութեան: Ստեփաննոս Արքեպիսկոպոս Յովակիմեան առաջնորդարանի իր գրասենեակէն կը նկատէր փոքրիկ մը որ դպրոցէն տուն կը ճամբուէր, կանչելով զինք աշակերտը կ'ըսէր թէ հարկ եղած դրամը չէր բերած եւ ուսուցիչը զինք տուն կը ճամբէր: Կը հարցնէր գումարին մասին ու Սրբազանը գրպանէն «ղրուշները» տարով զինք դասարան կը վերադարձնէր: Օր մըն ալ ուրիշ տղէկ մը նոյն կացութեան մատնուելով դարձեալ Սրբազանէն կը կանչուէր եւ այս անգամ ուզուած գումարը իր մօտ չունենալով, ինչ որ ունէր

կուտար տղուն եւ դպրոց կ'ուղարկէր ըսելով որ մնացեալը Սրբազանը վաղը պիտի տար: Իսկական նուիրում ուր դրամը արժէք չունի իսկական Հօր համար:

### Տարագրութեան Օրերը

Վրայ հասան 1915-ի տարագրութեան օրերը: Ստեփաննոս Արքեպիսկոպոս կանխեց Կ. Պոլիս երթալ եւ ազգու դիմումներ կատարել Բ. Դրան մօտ որ իր ժողովուրդը տեղահան չըլլար, ըսելով որ «եթէ իմ հօտէս որեւէ վնաս հասնի կառավարութեան, նախ զիս կախաղան բարձրացուցէք, եւ յետոյ իմ ժողովուրդը»: Հակառակ դիմումներուն Նիկոմիդիոյ հայեր իր գլխաւորութեամբ գաղթական ելան դէպի Էսկի Շէհիր եւ Գոնիա, ուր տեղուց կառավարիչը Սրբազանին Երուսաղէմի հայոց վանքը երթալ որոշած էր ապահովութեան համար, եւ սակայն ինք մերժած էր եւ իր ժողովուրդին հետեւած դէպի Գաթմա ուր միացած էր վրանաբնակ ու վայրավատին իր հօտին: Գաթմայէն երբ Մեսքենէ կ'եթար, այս անգամ Սիւրիոյ կառավարիչը ձեմալ փաշա կը հրահանգէր Սրբազան Հօր առանց պատճառաբանութեան Երուսաղէմ երթալ: Ստիպուած կը թողոր իր ժողովուրդը ու կը մեկնէր եւ հոն կը մնար մինչեւ 1918-ի գինադարը, որմէ ետք Պուլկարիա կ'անցնէր եւ հակառակ յառաջացեալ տարիքին թեմին Առաջնորդ կ'ընտրուէր:

### Առաջնորդ Պուլկարահայ Թեմին

Իր ընտրութենէն ետք Ամենայն Հայոց Գէորգ Ե Կաթողիկոս Ստեփաննոս Արքեպիսկոպոսին օգ-

նական կը նշանակէր Արմաշական Երուսաղէմ Եպիսկոպոս Փերտահճեանը որ նաեւ կը յաջորդէր Յովակիմեանին վերջնոյս 1934 թուի վախճանումէն ետք: Նախորդ տարին Խորէն Ա Մուրաբէկեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծերունագարդ Առաջնորդին օրհնութեան գիրով կը պատուէր «որպէս աւագագոյն հոգեւորական եւ միաբան Մայր Աթոռին, որ 62 տարիներ շարունակ հովիւ եղած էր իր ժողովուրդին սակաւաթիւ ուրախութիւններով եւ անհամար ցաւերով եւ դառնութիւններով»: Հայրապետը միեւնոյն ատեն կը հաստատէր Երուսաղէմ Արքեպիսկոպոսի փոխանորդութիւնը Պուլկարիոյ թեմին:

### Սրբազան Հօր Վախճանը

1934 թուի մարտ 10-ին այս պատկառելի հոգեւորականը Ստեփաննոս Արքեպիսկոպոս Յովակիմեան կը վախճանէր մայրաքաղաք Սոֆիայի մէջ 62 տարիներու անխոնջ, խիզախ, անհասնելի եւ նուիրեալ ծառայութենէ ետք, անցնելով համաշխարհային պատերազմի ահաւոր տասնամեակներէն: Յուրարկաւորութեան կը նախագահէր Երուսաղէմ Արքեպիսկոպոս որ կը կարգար Ամենայն Հայոց Հայրապետին ցաւակցական գիրը յանուն Մայր Աթոռի միաբանութեան եւ Հայաստանեայց Եկեղեցոյ:

Իր մեծ վաստակով Ստեփաննոս Սրբազան կը հանդիսանար հնօրեայ աւանդապաշտ բացառիկ հոգեւորականը, վարելով Նիկոմիդիոյ (Իգմիր) թեմին առաջնորդութիւնը 35 աննախընթաց տարիներ՝ մինչեւ հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան տարին: Կը հանդիսանար հայ եկեղեցականութեան ամենէն երէցը որ նոյնիսկ իր յառաջացեալ տարիքին պիտի վարէր Պուլկարիոյ թեմին առաջնորդութիւնը՝ ցմահ:

### Առաջնորդ Նիկոմիդիոյ Թեմին

Ստեփաննոս Արքեպիսկոպոս գերազանցեց իր նախորդները աւելի երկար տարիներու ծառայութեամբ եւ բոլորէն աւելի հայրախնամ հոգածութեամբ: Եղաւ կորովի եւ շինարար Առաջնորդ, ճշմարիտ հովիւ իր հօտին: Թեմէն ներս մեծ թիւով քահանաներ ձեռնադրեց, եւ երկու առիթներով Արմաշու Դպրեվանքէն հրաւիրուեցաւ շարք մը հոգեւորականներ ձեռնադրելու երբ վանքէն ներս եպիսկոպոս չէր գտնուէր: Անոնք էին Սուրէն Գալսեմեան, Վահրամ Նազարէթեան, Գեղամ Թէվէքէլեան, Հմայեակ Պաղտասարեան, Հրանդ Յովասափեան

Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

**Ճատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:**

Նախքան Ձեր ծրագրերուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կատաշարկով՝

- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք նաեւ թաղման ու յուղարկարարութեան ծառայութիւններ յարմար գիներով

Մանրամասնութեան համար դիմել՝

**ISABEL CRISTINA KEMANIAN**  
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016  
**(818) 284-8754**  
Email: isabel.kemanian@sci-us.com











# Մեր Դասընկերոջ՝ Սեպուհ Գաբրիելեանի Յիշատակին

## ԱՆԻ ՍԱՐՍԵԼԵԱՆ

Տաժանելի է ինձի համար եւ շատ դժուար, մեր դասընկերոջ՝ Սեպուհ Գաբրիելեանի կանխահաս մահը ընդունել եւ անմխիթար ու տխուր անոր մահախօսականը գրել:

Սահուն գրելու կարողութիւնս եւ զգացումներս բառերու եւ նախադասութիւններու վերածելու ունակութիւնս կը դաւաճանեն զիս, սակայն, ապաւինելով մեր մանկութեան ու պատանեկութեան լաւ յիշատակներուն, առաւել՝ Սեպուհի հպարտալի կենսագրականին՝ պէ՛տք էր գրել:

Ասկէ քառասուն օրեր առաջ, երկարատեւ հիւանդութենէ ետք անորոք մահը թակեց Սեպուհ Գաբրիելեանի կեանքի դուռը ու մարեց անոր ճրագը, լքելով իր ընտանիքը, հարազատները բարեկամներն ու դասընկեր դասընկերուհիները յաւիտենական, բաժանման անխուսափելի իրականութեան դիմաց: Իր մահով՝ մենք կորսնցուցինք ազնիւ ու համեստ մարդ, հաւատարիմ ու անկեղծ բարեկամ եւ հոգատար դասընկեր մը:

Ակնարկ մը կ'ուզեմ նետել իր կենսագրական տուեալներուն. Սեպուհ ծնած է Սուրբոյ Հայկազ քաղաքին մէջ 1960-ին: Կիլիկեան վարժարանի շուքին տակ եւ նստարաններու ետին միասնաբար բոլորեցինք մանկապարտէզի, նախակրթարանի եւ միջնակարգի երեք հանգրուանները: Կիլիկեանը մեզի համար եղած էր գիտութեան օրրան, ազգասիրութեան փարոս եւ սիրոյ աղբիւր, որուն հետեւանքով մեր բոլոր դասընկեր-դասընկերուհիներու կապը մնաց անխզելի, հակառակ հետագային մեզ բաժնող պայմաններուն եւ անջրպետին: Ան կիսատ թողելով ուսումը նետուեցաւ դերձակութեան ասպարէզին, մեծ յաջողութիւն գտնալով դարձաւ հայկալի ճանչցուած վաճառականներէն մին:

Սեպուհ բնաւ չմոռցաւ իր սիրելի դպրոցը եւ զայն հովանաւորող Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը որուն անդամակցելով դարձաւ անոր կարկառուն դէմքերէն մէկը իր ծառայութեամբ եւ անձնուիրութեամբ:

1986-ին ամուսնացաւ իր միակ սիրոյ Սոնա Մարտիրեանի հետ

եւ բախտաւորուեցաւ երկու զաւակներով, Արմէն եւ Մեղրիկ, կազմելով իր երազած հայկական տաք ու օճախը եւ իրականացնելով հոգատար ամուսնու եւ օրինակելի հօր տիպար կերպարը: Սակայն Սուրբոյ դաժան պատերազմը ինչպէս բոլոր հայկազայեցու Սեպուհի ալ ընտանիքին պատուհաս էր: Ան ստիպուեցաւ լքել Հայկազ եւ հաստատուել Միացեալ Նահանգներ: Պատերազմի արհաւիրքներէն հեռու մնալու մտումով Լոս Անճելոս հաստատուած էի ես ալ:

Կիլիկեանցի դասընկեր դասընկերներով կրկին հաւաքուեցանք այս անգամ Միացեալ Նահանգներու մէջ, մեր ընկերները որոք հաստատուած էին հոն երկար ժամանակէ ի վեր իրենց ընտանիքներով Կիլիկեանցի վայել բարոյական աջակցութիւն ցուցաբերելով դիւրացուցին մեր նոր կեանքի անկիւնադարձային դժուար քայլերը մեր ծննդավայրէն հեռու օտար երկնակամարի տակ:

Սեպուհ միութենական եւ ազգասիրական գործունէութիւնը շարունակեց Լոս Անճելոսի մէջ իսկ, իր բարոյական աջակցութիւնը բերելով Կիլիկեան Բարեգործական Միութեան շարքերէն եւ Հ.Մ.Մ.էն ներս անշահախնդրօրէն, առանց ակնկալութեան եւ միշտ պատրաստ տալու իր կուսակցութեան եւ անոր հովանավորութեան տակ գործող միութեան, առաւել՝ իրեն համար շատ սիրելի Կիլիկեան դպրոցին:

Սակայն դաժան հիւանդութիւնը հարուածեց զինք կիսաւարտ թողելով անոր հայրական եւ միութենական բոլոր պարտականութիւնները, որ իր կեանքի ու մահուան ճակատամարտի վերջին հանգրուանին իսկ առաջնահերթ էին իրեն համար եւ այսպիսով՝ անոր հետ մեր ունեցած տարիներու անկեղծ յարաբերութեան շարունակութիւնը որպէս հաւատարիմ դասընկեր, բարեկամ եւ եղբայր վերջ գտաւ իր կորուստով անջնջելի մատնահետքեր եւ յիշատակներ ձգելով մեր կեանքի արխիւներուն մէջ:

Ննջէ՛ հանգիստ, սիրելի՛ Սեպուհ, հողը թեթեւ գալ յոգնաբեկ ուսերուդ, Աստուած լուսաւորէ քու ազգանուէր ու մարդասէր հոգիդ, յիշատակդ անթառամ մնալ:

## ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՍԵՊՈՒՀ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Սեպուհ Գաբրիելեանի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Սեպտեմբեր, 2019ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու մէջ:

- Սգակիրներն են՝
- Այլին՝ Տիկ. Սոնա Մարտիրեան Գաբրիելեան եւ զաւակները Արմէն եւ Մեղրիկ Գաբրիելեան
- Արմէն եւ Քրիստ Գաբրիելեան
- Տէր եւ Տիկ. Պերճ եւ Սօսի Մսրըլեան
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Ճէնըս Մարտիրեան
- Տէր եւ Տիկ. Արա եւ Ծաղիկ Բունառճեաններ
- Զարուհի Մարտիրեան
- Տէր եւ Տիկ. Հրայր եւ Լիլեան Արըճեան
- Յարութ Արըճեան

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՍԵՊՈՒՀ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կատարուած են Հայկական Կրթական Բարեփրական Միութեան, որուն համար միութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ բոլորին.

Թաղէսս եւ Նորա Քէօրդլեան	\$1000
Արմէն եւ Մեղրիկ Գաբրիելեան	\$500
Պերճ եւ Սօսի Միսիրլեան	\$500
Աւետիս Մարգարեան	\$300
Տօքթ. Կարօ Նալպանտեան	\$300
Պետրոս եւ Լենա Խոտանեան	\$200
Արթին եւ Լուսին Պոյաճեան	\$200
Տօքթ. Արշակ եւ Վարդուկ Գազանճեան	\$150
Արա եւ Հուրի Գուրգէեան	\$150
Յակոբ եւ Նայիրի Գոգեան	\$150
Յարութ եւ Զուարթ Զուլջեան	\$100
Մարալ Պետիրեան	\$100
Յարութ Արըճեան	\$100
Միսաք եւ Թամար Հեքիմեան	\$100
Կարօ եւ Սեդա Գրիգորեան	\$100
Վարդան եւ Կարինէ Գոճապապեան	\$100
Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան	\$100
Ճորճ եւ Անահիտ Մատոյեան	\$100
Վարդան եւ Ծովիկ Քէօրդլեան	\$100
Վարդիվառ եւ Նայիրի Կարկուտեան	\$100
Գալուստ եւ Լենա Տէրտէրեան	\$100
Րաֆֆի եւ Սիլվա Եփրեմեան	\$100
Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան	\$100
Կարօ եւ Անի Պեքարեան	\$100
Օժէնի Պարսումեան	\$100
Զեփիլո Գուլումճեան (Եօկա)	\$100
Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան	\$100
Վարդան եւ Կարինէ Տեփոյեան	\$100
Սարգիս Պօղոսեան	\$50
Մի ոմն	\$50
Թոպի եւ Էմեր Բլանտես	\$40
Ալեքսան Հայրապետեան	\$25
Յակոբ Գիւլեան	\$25
Վիգէն Սերայտարեան	\$20

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**(626) 797-7680**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Ծանրորդ Յակոբ Մկրտչեան Աշխարհի Ախոյեան



Ծանրամարտի Հայաստանի հաւաքականի անդամ Յակոբ Մկրտչեանը դարձաւ աշխարհի առաջնութեան ախոյեան: «Արմենիբոքս»-ի հաղորդմամբ՝ Թաիլանդում ընթացող աշխարհի առաջնութեան տղամարդկանց 89 կգ քաշի պոկում վարժութիւնում Մկրտչեանը բարձրացրեց 167 կգ, իսկ հրումում՝ 208 կգ: Երկամարտի 375 կգ Մկրտչեանը դարձաւ աշխարհի ախոյեան:

Հայաստանի մէկ այլ ներկայացուցիչ՝ Դաւիթ Յովհաննիսեանը պոկում վարժութիւնում գլխավերեւում պահեց 160 կգ, իսկ հրում 195 կգ: Երկամարտի 355 կգ արդիւնքով Յովհաննիսեանը միայն 12-րդն է:

## ԱՊԼ. «Չելսի» - «Լիվերպոլ»՝ 1:2. Կլոպի Շարունակում է Յաղթել



Անգլիայի Պրեմիեր լիգայի 6-րդ տուրի կեդրոնական խաղում Լոնտոնի «Սիեմֆորդ Բրիջ» մարզադաշտում «Չելսի»-ն ընդունել էր «Լիվերպոլ»-ին:

«Լիվերպոլ»-ը 2:1 հաշուով յաղթանակ տօնեց: Յուրաքանչեւ Կլոպի թիմից կոլերի հեղինակ դարձան Ալեկսանդր-Արնոլդը եւ Ռոբերտո Ֆիրմինոն: «Չելսի»-ի միակ կոլը խփեց Նգոլո Կանտեն:

«Լիվերպոլ»-ն իր 6-րդ անընդմէջ յաղթանակը տարաւ Պրեմիեր լիգայի ընթացիկ մրցաշրջանում եւ 18 միաւորով վստահ կերպով կը շարունակի գլխաւորել մրցաշարային աղիւսակը: «Չելսի»-ն 8 միաւորով 10-րդ տեղում է:

## «Մանչեսթեր Սիթի»-ն Ջախջախեց «Ուոթֆորդ»-ին

Անգլիայի առաջնութեան 6-րդ տուրում «Մանչեսթեր Սիթի»-ն տանը ջախջախեց «Ուոթֆորդ»-ին: Խաղն աւարտուեց «քաղաքայիններ»-ի յաղթանակով՝ 8:0 հաշուով:

Հեթ-տրիկի հեղինակ դարձաւ Բերնարդու Սիլվան, մէկական անգամ աչքի ընկան Դավիդ Սիլվան, Կեւին դէ Բրիւնն, Ռիչարդ Մահրեզը, Նիկոլաս Օտամենդին եւ Սերխիո Ագուերոն:

Այս յաղթանակից յետոյ Պեպ Գուարդիոլայի սաները վաստակեցին 13 միաւոր եւ բարձրացան երկրորդ հորիզոնական:

## ՖԻՖԱ. Հայաստանի Հաւաքականը 96-րդն է

Ֆուտպոլի միջազգային ֆեդերացիան հրապարակել է ազգային հաւաքականների համաշխարհային դասակարգման ամենամտեսալ աղիւսակը: Հայաստանի հաւաքականը բարձրացել է երկու տեղով եւ 96-րդն է:

Առաջատար տասնեակում են Բելգիան, Ֆրանսան, Պրագիլիան, Անգլիան, Պորտուգալիան, Ուրուգուայը, Սպանիան, Խորուաթիան, Կոլումբիան ու Արժենտինան:

Յիշեցնենք, որ Եւրո-2020-ի ընտրական մրցաշարում Հայաստանի հաւաքականն այս ամիս Երեւանում 1:3 հաշուով պարտուեց Իտալիային, 4:2 հաշուով յաղթեց Պոսնիա-Հերցեգովինային:

## «Ռոման» Յաղթեց «Բոլոնյային», Մխիթարեանը Մասնակցեց Խաղին

Ֆուտպոլի Իտալիայի Ա սերիայի 4-րդ տուրի խաղում Հոմի «Ռոման» հիւրընկալուելիս 2:1 հաշուով յաղթեց «Բոլոնյային»:

Հիմնական իրադարձութիւնները տեղի ունեցան երկրորդ խաղակէստում: Նախ 49-րդ րոպէին Ալեքսանդր Կոլարովն առաջ մղեց հռոմէացիներին, իսկ քիչ անց Նիկոլա Սանսոնէն 11 մեթր հարուածով հաւասարեցրեց հաշիւը: Հանդիպման ելքը վճռեց մրցավարի աւելացրած ժամանակի 4-րդ րոպէին էդին Զեկովի գլխի հարուածով խփած կոլը:

Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, որը հայտաւորուած էր «Ռոմայի» մեկնարկային կազմում, խաղաց մինչեւ 86-րդ րոպէն, որից յետոյ նրան փոխարինեց պրագիլացի Ժուանը:

Այս յաղթանակից յետոյ հռոմէական ակումբը վաստակեց 8 միաւոր եւ բարձրացաւ 4-րդ տեղ, իսկ «Բոլոնեան» կրեց առաջին պարտութիւնը եւ նահանջեց 5-րդ հորիզոնական:

Յաջորդ՝ 5-րդ տուրում, «Ռոման» իր չարկի տակ կ'ընդունի «Ատալանտային»:



## Մեսի. Ինձ Համար Առաւել Կարեւոր Են Թիմային Յաղթանակները

Սպանական «Բարսելոնայի» եւ Արժենթինայի ազգային հաւաքականի առաջատար, ՖԻՖԱ-ի վարկածով 2019 թ. աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստ Լիոնել Մեսին Միլանում տեղի ունեցած FIFA Football Award մրցանակաբաշխութեան ժամանակ աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստի կոչմանն արժանանալուց յետոյ յայտարարել է, որ երջանիկ է մրցանակը ստանալու կապակցութեամբ, սակայն իր համար թիմային յաղթանակները վեր են անձնական նուաճումներից:

«Շնորհակալութիւն եմ յայտնում բոլորին, որոնք քուէարկել են իմ օգտին, որպէսզի ես արժանանամ այս մրցանակին:

Այստեղ եմ իմ կինն ու որդիները, որոնց ներկայութեամբ ես առաջին անգամ եմ այս կոչմանն արժանանում: Շատ ուրախ եմ, որ իմ ընտանիքը հնարաւորութիւն ունի տեսնել իմ այս նուաճումը:

Շատ ուրախ եմ աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստի կոչմանն արժանանալու համար, սակայն ինձ համար առաւել կարեւոր են թիմային յաղթանակները: Այս նուաճումը նոյնպէս թիմային յաղթանակների արդիւնք է», - յայտարարել է Մեսին:



## ՖԻՖԱ. Տարուայ Խորհրդանշական Հաւաքականը

Միլանում ընթացող ՖԻՖԱ-ի տարուայ մրցանակաբաշխութիւնում հրապարակուել է Պրոֆեսիոնալ ֆուտպոլիստների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի եւ ՖԻՖԱ-ի՝ FIFA FIFPro, վարկածով տարուայ խորհրդանշական հաւաքականը:

Դարպասապահ. Ալիսոն Բեքեր (Պրագիլիա, «Լիվերպոլ») Պաշտպաններ. Մարսելո (Պրագիլիա, «Ռեալ Մադրիդ»), Սերխիո Ռամոս (Սպանիա, «Ռեալ Մադրիդ»), Վիրջիլ վան Դեյկ (Հոլանդիա, «Լիվերպոլ»), Մաթյէ դէ Լիզտ (Հոլանդիա, «Եուվենտուս») Կիսապաշտպաններ. Լուկա Մոդրիչ (Խորուաթիա, «Ռեալ Մադրիդ»), Ֆրենկի դէ Յոնք (Հոլանդիա, «Բարսելոնա»), էդեն Ազար (Բելգիա, «Ռեալ Մադրիդ») Յարձակուողներ. Լիոնել Մեսի (Արժենթինա, «Բարսելոնա»), Կրիշտիանու Ռոնալդու (Պորտուգալիա, «Եուվենտուս»), Կիլիան Մբայե (Ֆրանսիա, ՊՍՏ):

## ԵԼ. «Ռոմա»-ն Ջախջախեց Թուրքական Ակումբին

Ախոյեանների լիգայի խմբային փուլի առաջին տուրում «Ռոմա»-ն «Ստադիո Օլիմպիկո»-ում ընդունել էր «Սթանպոլ Բաշակչէհիր»-ին: Խաղն աւարտուեց տանտէրերի ջախջախիչ յաղթանակով՝ 4:0 հաշուով:

42-րդ րոպէին հիւրերի կազմում ինքնակոլ է խփել Կայսարան: 58-րդ րոպէին Զեկոն կրկնապատկել է իր թիմի առաւելութիւնը: 71-րդ եւ 90-րդ րոպէին «գայլեր»-ի կազմում վերջնական հաշիւը ձեւակերպեցին Զանյոլոն եւ Կիլիվերպը:

Հայազգի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը այդպէս էլ խաղադաշտ դուրս չեկաւ, չնայած որ պահեստայինների նստարանին էր: Այսպիսով, «Ռոմա»-ն վաստակած 3 միաւորով «Վոլֆսբերգ»-ի հետ միասին գլխաւորում է Ե խմբի մրցաշարային աղիւսակը: